

34րդ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԴԱԽԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂԶ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ՀԱՄԱԿԵԴՐՈՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆՈՐ ԴՊՐՈՅ

Բարոյագիտութիւն, Քաղաք. Կրթութիւն,
Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն,
Դիտութիւններ, Մայրենի լեզու

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Տարրական Ընթացք

Զ. ՊՐԱԿ

ԳԻՐԲ ԱՇԽԱՏԵՐՆ

491.99-8
7-23

معارف نظارت جلیله سنک ٦١ نومرولی و فی
تاریخولو رخصتنامه سبيله طبع اولم

ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

ՍՄԲԱՏ ԴԱԽԹԵԱՆ

1901

8209

29 MAR 2013

491.99-8

7-23

1005-10

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՒԹԻՒՆ

1. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Պետք է բարի ըլլաւ. — Դուք հարկաւ ձայնդունիս ու Մրջիւնիս սուակը լսած էք: Զմրան ցուտերը դեռ նոր սկսած էին, երբ ձպուռը, որ ոչ տուն տեղ ունէր՝ եւ ո'չ ուտելիք, գնաց զարկաւ Մրջիւնին դուռը եւ աղաչեց որ բանայ ու զինքը պահպանէ մինչեւ դարուն: Մրջիւնը աշխատասէր ու լուրջ մէկն է, այս բանը պէտք է գիտնաք: Ասիկա ամբողջ ամառ աշխատած եւ իր ձմրան պաշարը պատրաստած էր, ուստի բարկութեամբ հարցուց ձպուռին թէ «Ի՞նչ ըրիր ամառ ատեն»: Զպուռը միամտօրէն պատասխանեց. — Ամառ ատեն տերեւներու մէջ երգեցի: Ասոր վրայ Մրջիւնը վռնտեց զանի եւ դուռը երեսին դոցեց: Հիմա կը հարցընեմ, դուք կը հաւնի՞ք Մրջիւնին այս ըրածին: Մըրջիւնը, այո՛ աշխատասէր է, խելացի է, բայց անգուլթ ու քարսիրտ է: Պէտք չէ՞ր որ այն ձիւնուցուրտին խզմար ձպուռին վրայ, զայն ներս առնէր: Ի՞նչ վնաս պիտի հասնէր իրեն, չառ չառ քանի մը ցորենի հատիկ պիտի տար, բայց ասոր փոխարէն իր ձագերն ալ պիտի սորվէին դուլթ ունենալ եւ՝ իրեն պէս՝ թշուառներուն օգնել: Չէ՛, Մրջիւնն այսպէս չըրաւ: Անի քարսիրտ է, իր ձագերն ալ իրեն պէս քարսիրտ պիտի մեծնան: Դուք չէք ուղեր նմանիլ Մրջիւնին, այնպէս չէ՞: Մրջիւնը խրատ տալէ առաջ, պէտք է ձպուռը ներս առնէր պաշտպանէր: Այո՛, նախ տալու՝ յետոյ խրատելու է:

Նոր Դպրոց, 2. Պրակ

3-ԿՐ. 104
ES-f

1. Առած. — Ամեն բանե սուսջ բարի եղիք. բարի մարդը խաղաղ կը ֆնանայ:

2. Առած. — Իրասիրտ մարդը զաղտնի բարիք կ'ընէ:

2. ԽՈՍԱԿՅՈՒԹԻՒՆ. — Տկարներուն օգնել. — Աշխարհի վերջին օրերն էր ու սատարի անձրևն մը կը տեղար, ճիշտ այն ատեն, երբ տղաքները դպրոցէն կ'արձակուէին: Անոնցմէ շատերը վերաբերուներ ունէին, անոնց մէջը փաթթուեցան, շատերն ալ հովանոց ունէին: Երկու եղբայրներ, որոնց տունը շատ հեռու էր դպրոցէն, երկուքն ալ խեղճ՝ հագուստներն հինցած ու թեթեւ, դպրոցի դրան առկու կեցած՝ կը դողդային ցուրտէն: Ինչ ընելու էր. — Եթէ երթային, անձրևը պիտի խամօր դիրենք, եթէ մնային, կը միմէր, ու անձրևն ալ գողցելու երես չ'ունէր: Տիգրան որ շատ բարեսիրտ տղայ էր, եւ միշտ կ'օգնէր տկարներուն, խեղճերուն, անմիջապէս հասկցաւ երկու եղբայրներուն վիճակը. մօտեցաւ անոնց եւ իր երկար վերաբերուն հանեց տուաւ մէկ եղբորը, միւս եղբայրն ալ թեւն տուաւ եւ հովանոցը բանալով տարաւ զանոնք իրենց տունը, յետոյ վերադարձաւ:

Տիգրան խենդի պէս ուրախ եղաւ, բարիք ընելը՝ տկարներուն օգնելը այնքան անուշ կուգար իրեն:

3. Առած. — Զգայուն տղա մը հոգին շատ աւելի ուրախ կ'ըլլայ երբ իրմէ տկարներուն կ'օգնէ:

3. ԽՈՍԱԿՅՈՒԹԻՒՆ. — Տալու մեղաւելի երգանկութիւն կայ քան առնելու մեղ. — Արամին հայրն ու հօրեղբայրը խոստացեր էին իրեն՝ ամէն շաբաթ օր տասնական փարա տալ, եթէ իր գծագրութեան դասերն ազէկ պատրաստէր: Հիմա Արամ երկու գրուշ ունէր եւ շատ ուրախ էր:

Երկուշաբթի կէսօրին երբ գծագրիչը ներս մտաւ, նախ բոլոր աշակերտներուն տետրակները ուղեց տեսնել: Արամին քով նստած էր պղտիկ տղայ մը, որ գլուխը կախած կուլար: Արամ հասկցաւ որ խեղճ տղան տետրակ չունի: Անմիջապէս ծածուկ մը հանեց տուաւ անոր երկու գրուշնոցը եւ ըստ որ ելլէ տետրակ մ'ուղէ: Տղան ամէցաւ ու տեղէն չարմեցաւ: Արամ անմիջապէս ելաւ դասատուին տուաւ ստակը եւ խնդրեց որ տետրակ մը տայ: Խեղճ տղան սրբեց արցունքը եւ սկսաւ դիւլ: Արամ այնքան ուրախ էր որ տուն դարձած ատեն շարունակ կ'երգէր, կը ծիծաղէր: Մայրը հարցուց պատճառը, Արամ պատասխանեց թէ այն օր գծագրութեան լաւ թիւ առած էր ու ծածկեց ըրած բարիքը:

4. Առած. — Տկար ընկեր մը մխիթարեցին աւելի աղէկ յինչ քան կայ:

5. Առած. — Ուրիշներուն սերը գրաւեցու համար ամենեւեմ ընտել միջոցը անոնց բարիք ընելն է:

4. ԽՈՍԱԿՅՈՒԹԻՒՆ. — Վիշտ ունեցողներուն վրայ գրացեք. — Սիրենք մեր այն ընկերները որ վիշտ ունին ու թշուառ են: Եթէ հանգիպինք բոլորովին անձանթ տղու մը որ խեղճ է, որ ցուրտէն կը դողայ կամ անօթի է, երես չգարձենք անկէ: Բան մ'ընել ու բան մ'ըսելու ենք զանի մխիթարելու համար: Եթէ տասը փարանոց մը չունինք անոր տալու, հին հագուստ մը տանք, կամ մեր կէսօրուան կերակուրէն մաս մը: Մտածենք, տղա՛ք, եթէ մենք անոնց տեղն ըլլայինք, այնպէս խեղճ, թշուառ, որչափ ուրախ պիտի ըլլայինք որ մէկը մեզի օգնէր: Բնաւ չծագրենք ուրիշները, չհարջարենք մեզմէ տկարները: Տղաքներ կան որ կենդանիներ հարջարելով կ'ուրախանան, շատ վատ բան է այս: Այն օր չուն մը,

կատու մը, թռչուն մը կը զարնէ, կը չարչարէ, նոյն իսկ այն՝ որ ճանճերը կը մեռցնէ՝ անգութ է, եւ երբ մեծ-նայ, կը սկսի մարդիկ ալ չարչարել: Մենք թէեւ պղտիկ ենք, բայց կը հասկնանք թէ ցաւը ինչ բան է. հարկաւ օր մը մեր ոտքը, ձեռքը ցաւած է, հիւանդութիւն մը ունեցած ենք: Կը տեսնէ՞ք մարդը ինչպէս կը չարչարուի: Հիմա, մտքերնիս պահենք որ շուն մը, կատու մը, կամ ո՛ր եւ է կենդանի մը մեղի պէս միս, ոսկոր ու ջիղեր ունի, ան ալ ցաւ կ'իմանայ: Ամենեւին չչարչարենք կենդանիները, անոնց ցաւ չպատճառենք:

Ընդհակառակն, մօտենա՛նք մեր ընկերներուն, իմա՝ նա՛նք անոնց ցաւերը, մխիթարե՛նք զանոնք: Ասկէ զատ որչափ մեր ձեռքէն կուգայ, չթողունք որ ուրիշներն ալ չարչարեն կենդանիներ:

6. Առած — Միայն անսիրտ մարդիկ կեցողակները կը չարչարեն:

5. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Անգրութիւնը ատելու է. — Անգութ տղաքներէն աւելի զղուելի բան չկայ: Ես այդ տեսակ տղաքներ կը ճանչնամ որոնք ճանճերը, թիթեռնիկները կը բռնեն՝ անոնց թեւերը կտրելու համար, բղբոյները կը բռնեն անոնց թեւերը փրցնելու համար: Կատուները պոչէն կը բռնեն ու օդին մէջ կը դարձնեն, քարերով ճնճղուկներուն կը զարնեն, գորտերը կը սպաննեն, թռչուններու բոյները կը քանդեն, փողոցին մէջ շուներուն քար կը նետեն, դեռ ո՞րը ըսեմ, զղուելի անգթութիւններ կ'ընեն: Ատենք անգթութիւնը, տղաք, այս աշխարհիս մէջ, ամէն մարդ աշխատելու է ուրիշին թշուառութիւնը մեղմացնել, ոչ թէ անգթութիւն ընել:

7. Առած. — Չարիքի փոխարէն բարիք ըրե՛ք:

8. Առած. — Հերիք չե որ մարդ չարիք ընելէ զոչ-շանայ, պէտք է ձեռքէն եկած բարիքն ընել անպատճառ:

6. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Ագահութիւնը ատելու է. — Մարդիկ կան որ շատ ու շատ հարստանալ կ'ուզեն. մարդիկ ալ կան որ խեղճ ու կրակ կ'ապրին, ամէն բանէ կը զըրկուին ստակ զիջելու համար: Զղուելի բան է այս ագահութիւնը: Զեղի սիրուն առակ մը պատմեմ. Ատենօք ագահ մարդ մը կ'ունենայ հաւ մը, որ ամէն օր մէկ մէկ ոսկի հաւկիթ կ'ածէ իրեն: Մարդը կը խորհի թէ հարկաւ այս ոսկի հաւկիթները հաւի փորին մէջ են, փոխանակ երկար սպասելու որ օրը մէկ ոսկի հաւկիթ տայ, հաւը մորթելու եւ ոսկի հաւկիթները փորէն հանելու է: Այդպէս ալ կ'ընէ, բայց, ո՛վ դժբաղդութիւն, հաւուն փորին մէջ սովորական մանրիկ հաւկիթներ կը գտնէ, ուրիշ ոչինչ: Այսպէս, ագահ մարդը շատ անգամ, երբ կ'ուզէ շատ բան ունենալ, ունեցածն ալ կը կորսնցնէ:

9. Առած. — Խնայող մարդը ամենեւեւ հարուստ մարդն է, ագահ մարդը ամենեւեւ աղքատ:

7. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Բարիք ընելու ուրախութիւնը. — Տեսա՞ծ էք արդեօք այն տղաքները որ չար են. անոնք միշտ խոժոռ ու կախ գէմք ունին, ընդհակառակը, անոնք որ բարի են, միշտ զուարթ ու անուշ գէմք ունին:

Ասիկա ընական է: Զէ՞ք փորձած որ երբ գէշ բան մ'ըրած էք, երբ յանցանք մը գործած էք, ախուր կ'ըլլաք, վախկոտ, կասկածոտ գէմք կ'ունենաք. իսկ երբ բարի բան մ'ըրած էք, երբ ձեզ զոված են, ձեր աղէկութեանն համար, միշտ ուրախ կ'ըլլաք եւ ձեր երեսին վրայ ծիծաղ կայ: Երբ ամէն ընկերի հետ քաղցրութեամբ վարուիք, երբ աղքատին օգնէք, երբ դժբաղդ մէկը մխիթարէք, ձեր գէմքը պիտի զուարթանայ, որովհետեւ ամէն մարդ ձեզ պիտի սիրէ, ձեզ պիտի գովէ:

Բարի մարդը միշտ ուրախ է, բարի տղան միշտ զուարթ կ'ըլլայ, բարութիւնը ուրախութիւն կը բերէ:

10. Առած. — Տղայ մը երջանիկ է, երբ բարի բաներ կ'ընէ, որովհետեւ այն ասէն սիրելի կ'ըլլայ քե՛ իր ընկերներուն, քե՛ թողոր զինքն անհոգութեամբ:

11. Առած. — Բարիք ընէ՛ր ամէն օր, երբ սոխիքը գայ, պզտիկ բարիք մ'ընէ՛ր այս է կեանքին նպասակը:

Յ. ԽՍՍԱՅՈՒԹԻՒՆ. — Բարութիւնը կը մօտեցնէ եւ բարոյական տէր կ'ընէ. — Այն տղան որ բարի սիրտ ունի, եթէ պատահաբար յանցանք մը գործէ, սաստիկ կը զղջայ, այո՛, կը զղջայ ու միտքը կը գնէ որ անգամ մ'ալ չընէ: Մտիկ ըրէ՛ք Անհոգ Երուանդին պատմութիւնը: Տաօը տարեկան էր Երուանդ, անհոգ ու քիչ մ'ալ ծոյր Գէշ տղայ էր, բարի էր, բայց անհոգութեամբ շատ անգամ չար բաներ կ'ընէր, ու իր ծեր մայրը կը վշտացնէր: Օր մ'ալ հիւանդացաւ մայրը եւ մեռաւ: Երուանդ շատ լացաւ, շատ տխուր էր, խելքը գլուխն եկաւ ու միտքը դրաւ բարի ու աշխատասէր ըլլալ: Երուանդ իր խօսքը պահեց. բարի տղայ մը եղաւ եւ հիմա ամէն մարդ կը գովէր զինք: Երուանդ կը մտածէր. «Ա՛խ, երանի՛ թէ մայրս ողջ ըլլար ու տեսնէր՝ ես ի՜նչ աղէկ տղայ եղած եմ»: Երուանդ միտքը դրաւ իր մօրը միշտապէս համար բարի, աշխատասէր ըլլալ եւ այնպէս եղաւ:

ԱՄՓՈՓՈՒՄ ՎԵՅԵՐՈՐԴ ԱՄՍՈՒԱՆ

Ես կ'ուզեմ բարի ըլլալ, մէկու մը գէշութիւն չընել եւ մէկու մը դաւ չպատճառել: Ես պիտի օգնեմ անոնց որ ինծիմէ աւելի տկար՝ աւելի խեղճ են: Աւելի աղէկ է որ միշտ տամ քան առնեմ: Ես անգութ ու ազատ պիտի չըլլամ, բայց շոյալութիւն ալ պիտի չընեմ: Ես իմ ունեցածներէս միշտ բաժին մը պիտի տամ խեղճերուն: Ես իմ ուրախութիւնս բարիք ընելու մէջ պիտի փնտռեմ, եւ պիտի ջանամ ամէն օր պղտիկ բարիք մ'ընել:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ. — ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Օտմ. Պետութեան միլիոնաւոր ժողովուրդները կը բնակին գլխաւորապէս Ասիական ու Եւրոպական Տաճկաստանի մէջ, ուր հաստատուած են գիւղեր, գիւղախմբեր, փոքր ու մեծ քաղաքներ:

2. Աս բաղաժիւ քաղաքներն ու գիւղերը վարչական շրջանակներու բաժնուած են. պետական պաշտօնեաներ կարգուած են ամէն մէկ տեղի համար: Անոնք կը վարեն կառավարութեան գործերը, հաստատուած օրէնքներու համեմատ, եւ Վեհափառ Սուլթանին հրամանով, որ օսմանեան կայսրութեան գլուխն է:

3. Այդ վարչական բաժանումները հետեւեալներն են.

Ա. Գիւղ (Դարիյէ) որ կը բաղկանայ քանի մը տուներէ կամ խրճիթներէ: Գեղացիները սովորաբար երկրագործ են:

Բ. Գիւղախումբ կամ Աւան (Նահիյէ) որ կը կազմուի քանի մը գիւղերէ:

Գ. Գաւառակ (Դաւա) որ գիւղախմբերու կեդրոնն է՝ աւելի զարգացած: Հոն կը գտնուի աւելի մարդ՝ քան գեղերը, կանոնաւոր տուն տեղ, թաղ, դպրոց, մզկիթ, եկեղեցի, վաճառատուն, շուկայ, փողոց, եւայլն կայ:

Դ. Գաւառ (Սահնազ) որ քանի մը գաւառակէ կը կազմուի եւ գաւառակներուն ամէնէն բաղմամբ ու կեդրոն տեղն է:

Ե. Նահանգ (Վիլայեթ) որ է գլխաւոր բաժանումը գաւառական կեդրոններու: Նահանգին ժողովուրդն ա-

ւելի զարգացած, առուտուրն աւելի ճոխ, բնակարանները եւ ուրիշ հանրային շէնքերը աւելի գեղեցիկ են:

1. Ո՞ր տեղեր կը բնակին օտմ. ժողովուրդները: — 2. Ո՞վ կը վաճէ նոյն տեղերու կառավարական գործերը եւ որո՞ւ նրամանով: — 3. Որո՞նք են հաղափային վարչութեան բաժանումները կամ ասիւնանները:

2. ԴԱՍ. — ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1. Օտմ. պետութեան մէջ քաղաքային վարչութեան բաժանումներն հետեւեալ կերպով կը կառավարուին.

1. Գիւղը կը կառավարուի Ծերերու ժողովէ մը (իւլիսիսի մեհիլիսի) որուն պետն է գիւղապետը (մուխարա):

2. Գիւղախումբ կամ աւանը ունի նահիյե մեհիլիսի որուն պետն է գիւղախմբապետը (միւսխի):

3. Գաւառակը կը կառավարուի վոյս-կառավարիչով (գայմագաւ), ունի ամէն տեսակ նախնական դատարաններ եւ վարչական ժողով (մեհիլիսի իսարե) եւ ոստիկան-հարկւրապետ (ժանսարմա-եխզպաշը) եւ քաղաքապետական ժողով (պեղեսիյե մեհիլիսի):

4. Գաւառը կը կառավարուի կառավարիչով (միւքե-ասրըփ), ունի ամէն տեսակ նախնական դատարաններ, եւ վարչական ժողով (մեհիլիսի իսարեի շիւլա), եւ ոստիկանապետ (քապուր աղասը), եւ Քաղաքապետական ժողով (մեհիլիսի պեղեսի):

5. Նահանգը կը կառավարուի կուսակալով (վալի), ունի ամէն տեսակ վերաքննիչ Ատեաններ, վարչական ժողով (մեհիլիսի իսարեի վիլայեթ), Տէֆթերտար, Մուհապէճի, Քաղաքապետական ժողով եւ ոստիկան հաղարապետ (աշայ պեյի):

6. Կ. Պոլիսը իր շրջակայ գաւառներովը, մէկ կուսակալութիւն մը կը համարուի, Քաղաքապետը (շեհիր եմիլի) Կ. Պոլսոյ կուսակալ անունը կը կրէ:

7. Ինչպէս տեսանք Բ. ամսուան Աշխարհագրութեան դասին մէջ (Բ. պրակ, էջ 30, Դաս 2, եւ էջ 34, Դաս 5) Պոլսոյ թաղերն ու գեղերն ալ ունին իրենց վարչական բաժանումներն ու թաղապետական շրջանակները:

1. Ո՞վ կը կառավարէ գիւղը: — 2. Գիւղախումբը: — 3. Գաւառակը: — 4. Գաւառը: — 5. Նահանգը: 6. — Կ. Պոլիսը իր շրջակայներովը ի՞նչ կը կազմէ: — 7. Պոլսոյ քաղերուն հաղափային բաժանումը ի՞նչպէս է:

3. ԴԱՍ. — ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐ

1. Պետական պաշտօնատար են անոնք որ կառավարական ո՞ր եւ է գործ կատարելու պաշտօն ունին:

2. Պետական պաշտօնեայ են նահանգին մէջ կուսակալը (վալի), վոյս-կուսակալը (վալի մուալիմի), տէֆթերտարը, մուհապէճին, թահրիրաթ միւտիրին, ասոնց օգնականները, դարգիրները, եւայլն: Գաւառին մէջ՝ միւթէսարըփ, մուհապէճի, սանարգ էմինի, ինչպէս եւ գայմագամները, միւտիրները, եւայլն:

Իսկ մարաքաղաքին մէջ նախարարներ՝ իրենց ստորադաս պաշտօնեաներով, դատաւորները, մաքսատան եւ Քաղաքապետութեան պաշտօնեաները (պեղեսիյե չալուշու), երկրաչափները՝ մէկ խօսքով ամէն անոնք որ պետութենէն թոշակ կը ստանան:

3. Աս ամէն պաշտօնատարները ընտրուած են, օսմանեան օրէնքներուն համամատ, պաշտպանելու ժողովուրդին շահերը, այնպէս որ մէկը չ'իլատէ ուրիշին, անոր ունեցածը չ'կապտէ: Նաեւ անոնք կը գործադրեն բարձրագոյն հրամանները, կը հսկեն բարեկարգութեան, կը թուրեման, ելմտական գործերու, ճամբաներու եւայլն:

4. Ա. մէն մարդ պարտաւոր է հնազանդիլ պետական պղտիկ թէ մեծ պաշտօնատարներուն որոնք կառավարութեան ներկայացուցիչն են: Պէտք է յարգել

զանոնք, պէտք է հպատակիլ օրէնքներուն (շերխար, գանուռն եւ նըզաւ) որոնք հաստատուած են արդարութեան վրայ եւ ցոյց կուտան ժողովուրդին պարսֆն ու յիշաւունքը: Այս օրէնքները գրուած են Տիւսրուրին մէջ:

1. Ի՞նչ կ'ընեն պէտական պատօնները: — 2. Որո՞նք են գաւառի եւ Պոլսոյ պէտական գործերը կոստողները: — 3. Ի՞նչ է անոնց պատօնը: — 4. Պարսաւոր ենք հնազանդիլ պէտական պատօններուն: Ի՞նչ է օրէնքին հիմն ու սկզբունքը: Ի՞նչ գրուած են օրէնքները:

4. ԴԱՍ. — ԵԼԵԻՄՈՒՏՅՐ

1. Պետութիւններն ալ մեծ ընտանիքներ կը սեպուին, անոնք ալ ունին ծախսեր ու հասոյքներ:

2. Պետութեան մը ծախքերը կը կազմեն քաղաքային ու ղինուորական պաշտօնատարներու թոշակները, պետական շէնքերու, ճամբաներու, դպրոցներու համար գործածուած գրամը, ղինուորներու ոտնիկն ու պատեքազմական պէտքերու, ռազմաթիւրքի ծախքերն, եւայլն:

3. Իսկ հասոյթներն են ժողովուրդին վճարած տուրքերը, մաքսային (րուսուռնաք կամ կեօմրիւկ), ղինուորական (պէսէշար), տասանորդի (աղնաւ), վաճառականութեան (քեմէքքիւ), կալուածներու (եւլնաֆ), ճամբու տուրք, մէարիթի տուրք, եւլն., ղորոնք ժողովուրդը սիրալոյսով պարտի վճարել, քանի որ այդ ղրամը իր օգտին պիտի գործածուի:

4. Անտառները, հանքերը, երկրագործութիւնը երկրի մը հարստութիւնը կը կազմեն:

5. Արդ՝ պետութիւնն ալ, իր ծախքերն ու հասոյթները կը հաշուէ, կը գրէ իր տուրք տուարներու մէջ, եւ տարեգլխուն կը կազմէ իր հաշուեկշիռը:

Այդ հաշիւներէն հետեւցնելով կը գտնէ թէ առաջիկայ տարի որքան եկամուտ եւ ծախք պիտի ունենայ: Աս ցուցակին կ'ըսեն ելմաւոյց կամ պիւսճեկ:

1. Պետութիւններն ինչի՞ կը նմանին: — 2. Ի՞նչ ծախսեր կ'ունենայ պետութիւնը: — 3. Որո՞նք են հասոյքները: 4. Ի՞նչ հարստութիւններ կ'ունենայ երկիր մը: 5. Ի՞նչ է ելմաւոյց կամ պիւսճեկ:

ՅԱՅ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ — ՀԱՅՈՅ ՀԻՆ ԳԻՐԵՐԸ

1. Հայոց հին գրերը. — Հայերը մինչեւ Քրիստոսի 404 թուականը շատ գրեր գործածեցին ու փոխեցին, ինչպէս եանները քեւեռագիր կը գործածէին, այսինքն դամի նման գրեր: Այս գրերու գործածութիւնը, այսինքն ընթերցումն ու գրելը մոռցուած էր: Հատեաններն ալ պատկերագրեր ունէին, այսինքն պատկեր մը կը գծէին, կը կարգային պատկերին յատկութիւնը, պատկերը ցոյց տուող առարկան ու պատկերին անունին առաջին ղիրը: Ասոր գործածութիւնն ալ շատ ղժուար ըլլալուն, ժամանակ անցնելէ ետք, մոռցուած էր:

2. Յետոյ իրենց ղրացի ժողովուրդներու հետ հաշորդակցելու համար՝ գործածեցին Յունարէն ու Ասորերէն գրեր: Եկեղեցիներուն մէջ Ս. Գիրքը կը կարգացուէր այս օտար լեզուներով:

3. Ասոնք ալ ունէին իրենց ղժուարութիւններն ու անպատեհութիւնները, վասն ղի ժողովուրդը չէր հասկընար կարգացուած գրքերն ու ժամերգութիւնները, իսկ շատ վարդապետներ չէին կրնար Ս. Աւետարանը մեկնել ժողովուրդին հասկնալի Հայերէն լեզուով, որովհետեւ Յոյն եւ Ասորի լեզուներուն իրենք ալ տեղեակ չէին:

1. Հայերն ի՞նչ գիր կը գործածէին մինչեւ Քրիստոսի 404 թուականը: — 2. Անկի՞ ետք: — 3. Յոյն եւ Ասորի գրերուն համար ի՞նչ ղժուարութիւն կը իրէին վարդապետներն ու ժողովուրդը:

2. ԴԱՍ. — ՀԱՅՈՑ ԳՐԵՐՈՒ ԳԻՒՏԸ

4. Հայոց գրերու գիւտը. — Այս գիտարութեանց առաջին անհիւս համար, Ս. Մեսրոպ՝ Ս. Սահակ Հայրապետին աջակցութեամբ՝ շատ քաղաքներ դնաց, ինչպէս Ասորի Դանիէլ եպիսկոպոսին քով ուրկէ բաւական օգտուեցաւ: Սակայն իր փափաքին կատարելապէս չհասնելով՝ ապաւինեցաւ Աստուծոյ եւ երազին մէջ թաթ մը տեսաւ որ Ա. Ե. Ի. եւ ին. կը գրէր:

5. Ս. Մեսրոպ այս տեսիլքէն ետք, Հռոմիսնոս յոյն գեղագրին քով դնաց եւ անոր աջակցութեամբ Հայոց գրերը կազմեց, ձեւեց յունարէն այբուբենին վրայ:

6. Ս. Մեսրոպ՝ մեծապէս ուրախացած՝ առաջին անգամ Յունարէն լեզուէ Հայերէնի թարգմանեց Սողոմոնի «Առախաց Գիրքը», եւ յետոյ մեծ աշխատութեամբ Հին ու Նոր Կտակարանը, Ս. Սահակ կաթողիկոսին եւ իր եղբիկ, Յովնան, Յովսէփ եւ ին. աշակերտներուն հետ: Աստուածաշունչն ա՛յնքան սքանչելի թարգմանեցին որ օտար ազգեր՝ սքանչացած՝ «թագունի թարգմանութեանց» անուանեցին զայն:

7. Ա՛լ այնուհետեւ ամէն տեղ տարածուեցաւ Հայ լեզուի ուսումը դպրոցներու միջոցաւ ու դադրեցան եկեղեցական ամէն արարողութիւն Ասորի ու Յոյն լեզուներով կատարուելէ, որովհետեւ Բրիտանիստեան տարածումէն մինչեւ այդ թուականը, տեղ մը Ասորի ուրիշ տեղ մ'ալ Յոյն լեզուներով կը կատարուէին եկեղեցական արարողութիւններն ու վարդապետ մ'ալ կ'ելլէր Հայերէնի կը թարգմանէր: Ասկէ մնացած են մեր եկեղեցական գրուածքներու մէջ Յունարէն ու Ասորերէն բառեր, ինչպէս՝ Պնօսիտակե, Օրփի, Աշեղուիս, եւ ին.:

4. Ի՞նչ քաւ Ս. Մեսրոպ եւ ո՛ր դիմեց Հայերէն գրէր գտնելու համար: — 5. Ի՞նչ տեսաւ Երազմի մէջ: — Որո՞ւ դիմեց: — 6. Առաջին անգամ ո՞ր գիրքը թարգմանեց: Յետո՛յ: Որո՞նք օգնեցին Աստուծաւորնի թարգմանութեան: — 7. Անկէ ետք ինչե՞ր քաւ Ս. Մեսրոպ:

3. ԴԱՍ. — ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ (Ե. ԴԱՐ)

8. Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի առաջին աշակերտներն անոնք են որ գրերու գիւտին աստեղ բաւական հասկաւոր էին եւ իրենց վարդապետներուն օգնեցին Ս. Գիրքը հայերէնի թարգմանելու: Ասոնց մէջ նշանաւոր են. Յովսէփ Վայոց Ձորեցի որ ետքը կաթողիկոս եղաւ, Յովհան Խոսեփանոյ, Ղեւոնդ երեց Վանանդեցի որ Կորիւնին հետ Բիւզանդիոն դնաց եւ անկից Աստուածաշունչի ընտիր օրինակ մը բերաւ, Եզնիկ Կողքացի որ Եղծ Աղանդոց անուն գիրքը գրեց, Կորիւն, Մուշե Տառնեցի, Տիրայր Խորհեմացի, Յովսէփ Պաղեացի եւ Յովհան Եկեղեցացի (աս երկուքը հզօր աջակց եղան Ս. Մեսրոպին՝ աշակերտ հասցընելու եւ Ս. Գիրքը թարգմանելու համար), Ենոյիֆ ու Դանան որոնք Աղուանից երկրին վերականգնու եղան, Երեմիս որ թաղեց Ս. Սահակը, եւ Թաղիկ կամ Թողիկ որ Մեսրոպին Տեղապահ եղաւ:

9. Ասառաջին թարգմանիչները, իրենց վարդապետներուն քով կրթուելէ ետքը, զրկուեցան Արեւմուտքի նշանաւոր քաղաքները Բիւզանդիոն, Աթէնք, Ալեքսանդրիա, եւայլն, ուր բարձրագոյն դպրոցներու մէջ իրենց ուսումը կատարելագործեցին: Ամէնքն ալ յաջողակ կը հանդիսանային իրենց օտարազգի ընկերակիցներուն մէջ եւ նոյն իսկ կը գերազանցէին զանոնք:

8. Որո՞նք են առաջին աշակերտներէն նշանաւորներ: Ինչո՞ւ առաջին կը կոչուին: — 9. Առաջին թարգմանիչները ո՞ր դրկուեցան եւ ինչո՞ւ:

2. ԴԱՍ. — ՀԱՅՈՑ ԳՐԵՐՈՒ ԳԻԻՏԸ

4. Հայոց գրերու գիւտը. — Այս դժուարութեանց առաջին անհելու համար, Ս. Մեսրոպ՝ Ս. Սահակ Հայրապետին աջակցութեամբ՝ շատ քաղաքներ գնաց, ինչպէս Ասորի Դանիէլ եպիսկոպոսին քով ուրկէ բաւական օգտուեցաւ: Սակայն իր փափաքին կատարելապէս չհասնելով՝ ապաւինեցաւ Աստուծոյ եւ երազին մէջ թաթ մը տեսաւ որ Ա. Ե. Է. եւլն. կը գրէր:

5. Ս. Մեսրոպ այս տեսիլքէն ետք, Հռոմիստոս յոյն գեղադրին քով գնաց եւ անոր աջակցութեամբ Հայոց գրերը կազմեց, ձեւեց յունարէն այբուբենին վրայ:

6. Ս. Մեսրոպ մեծապէս ուրախացած՝ առաջին անգամ Յունարէն լեզուէ Հայերէնի թարգմանեց Սողոմոնի «Առախաց Գիրքը», եւ յետոյ մեծ աշխատութեամբ Հին ու Նոր Կտակարանը, Ս. Սահակ կաթողիկոսին եւ իր Եղիշիկ, Յովնան, Յովսէփ եւլն. աշակերտներուն հետ: Աստուածաշունչն ա՛յնքան սքանչելի թարգմանեցին որ օտար ազգեր՝ սքանչացած՝ «թագունի թարգմանութեանց» անուանեցին զայն:

7. Ա՛լ այնուհետեւ ամէն տեղ տարածուեցաւ Հայ լեզուի ուսումը դպրոցներու միջոցաւ ու դադրեցան եկեղեցական ամէն արարողութիւն Ասորի ու Յոյն լեզուներով կատարուելէ, որովհետեւ Քրիստոնէութեան տարածումէն մինչեւ այդ թուականը, տեղ մը Ասորի ուրիշ տեղ մ'ալ Յոյն լեզուներով կը կատարուէին եկեղեցական արարողութիւններն ու վարդապետ մ'ալ կ'ելլէր Հայերէնի կը թարգմանէր: Ասկէ մնացած են մեր եկեղեցական գրուածքներու մէջ Յունարէն ու Ասորերէն բառեր, ինչպէս՝ Պոսիստուեմ, Օրբի, Աշեղուխ, եւլն.:

4. Ի՞նչ քաւ Ս. Մեսրոպ եւ ո՞ր դիմեց Հայերէն գրէր գտնելու համար: — 5. Ի՞նչ տեսաւ երազին մէջ: — Որո՞ւ դիմեց: — 6. Առաջին անգամ ո՞ր գիրքը թարգմանեց: Յետո՛յ: Որո՞նք օգնեցին Աստուածաշունչի թարգմանութեան: — 7. Անկէ ետք ինչե՞ր քաւ Ս. Մեսրոպ:

3. ԴԱՍ. — ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ (Ե. ԴԱՐ)

8. Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի առաջին աշակերտներն անոնք են որ գրերու գիւտին ատենը բաւական հասկաւոր էին եւ իրենց վարդապետներուն օգնեցին Ս. Գիրքը Հայերէնի թարգմանելու: Ասոնց մէջ նշանաւոր են. Յովսէփ Վայոց Ձորեցի որ ետքը կաթողիկոս եղաւ, Յովհան Խոսրովանոյ, Ղեւոնդ երեց Վանանդեցի որ Կորիւնին հետ Բիւզանդիոն գնաց եւ անկից Աստուածաշունչի ընտիր օրինակ մը բերաւ, Եզնիկ Կողբացի որ Եղծ Աղանդոց անուն գիրքը գրեց, Կորիւն, Մուշե Տառնեցի, Տիրայր Խորանեացի, Յովսէփ Պաղանցի եւ Յովհան Եկեղեցացի (այս երկուքը հօգօր աջակցեց եղան Ս. Մեսրոպին՝ աշակերտ հասցընելու եւ Ս. Գիրքը թարգմանելու համար), Ենոյիփ ու Դանան որոնք Աղուանից երկրին վերակացու եղան, Երեմիա որ թաղեց Ս. Սահակը, եւ Թաղիկ կամ Թողիկ որ Մեսրոպին Տեղապահ եղաւ:

9. Աստուաջին թարգմանիչները, իրենց վարդապետներուն քով կրթուելէ ետքը, զրկուեցան Արեւմուտքի նշանաւոր քաղաքները Բիւզանդիոն, Աթէնք, Ազէքսանդրիա, եւայլն, ուր բարձրագոյն դպրոցներու մէջ իրենց ուսումը կատարելագործեցին: Ամէնքն ալ յաջողակ կը հանդիսանային իրենց օտարազգի ընկերակիցներուն մէջ եւ նոյն խի կը գերազանցէին զանոնք:

8. Որո՞նք են առաջին աշակերտներէն ճշմարտօրէն: Ինչո՞ւ առաջին կը կոչուին: — 9. Առաջին թարգմանիչները ո՞ր դրկուեցան եւ ինչո՞ւ:

4. ԴԱՍ. — ԵՐԿՐՈՐԴ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ (Ե. Դար)

10. Ինչպէս տեսանք, Սահակ ու Մեսրոպ, Հայերէն գրերու զիւտէն հոգը, շատ զպրօցներ լայնին եւ իրենց ջանքը կրկնապատկեցին հայ մանուկներուն սորվեցնելու հայերէն գրերը եւ ուրիշ ուսումներ: Աս զպրօցներուն մէջ դաս առնողներէն խելացի, ուշիմ, եւ գեղեցկաձայն տղաքը շրջանաւարտ ըլլալէն հոգը, զրկուեցան դարձեալ Արեւմուտի բարձրագոյն վարժարանները: Ասոնք ալ ուսման մէջ զարգանալով՝ իրենց երկիրը վերադարձան եւ Ս. Սահակի ու Ս. Մեսրոպի օրինակին հետեւելով՝ ուսում եւ կրթութիւն տարածեցին, Հայ. եկեղեցիին ու ժողովուրդին ռոգտակար եղան:

11. Երկրորդ թարգմանիչներն են. Դաւիթ Անյաղբ, փիլիսոփայ, որ Մովսէս Խորենացիին քննորդին է, Գիւրգիսոյի կաթողիկոս, Յովնան Մանդակունի կաթողիկոս, Եղիշէ Պատմագիր (Ս. Վարդանի Ատենադպիրը) որ «Յաղագս Վ. եւ Հայոց» գիրքը գրեց, պատմագիր Մովսէս Խորենացի (Մեսրոպի քննորդին) որ հեղինակն է «Տարեգրութիւն Հայոց» անուն գրքին, Մամբրէ Վերծանող (Խորենացիին եղբայրը), Դազար Փարսկեցի եւ ուրիշներ:

12. Ե. զարուն ծաղկեցաւ հայ գրականութիւնը եւ հայ լեզուն: Ասոր համար կոչուեցաւ Ուլիկար:

10. Հայերէն գրերու զիւտէն վերջը ի՞նչ լրին Սահակ եւ Մեսրոպ: Այդ պրօցներէն ելլող աշակերտներն ո՞ր զրկուեցան: — 11. Որո՞նք են երկրորդ թարգմանիչներէն նշանաւորները: — 12. Հայ գրականութիւնը ու լեզուն ի՞նչ վիճակ ունեցաւ հինգերորդ դարուն:

5. ԴԱՍ. — ՄԵՐ ՊԱՐՏԻՐ

13. Թարգմանիչներուն երախտագիտութիւն պարտինք. — Ո՛րչափ պէտք է յարգանք ու սիրենք այս պատուահան վարդապետները որոնք լոյս: ջա՛նք վառեցին աւելնուն սրտին ու մտքին մէջ: Եկեղեցին ամէն տարի մեր երանաշնորհ վարդապետներուն, թարթմանիչներուն տօնը կը կատարէ, սա՛կայն հարկ է որ բոլանդակ հայ աղէն պատիւ ու յարգանք ընծայէ Ս. Թարթմանիչներուն:

14. Հայ քրիստոնեայ ժողովուրդը պարտաւոր է նոյնպէս գագրիլ աշխարհային գործերէ՝ Հայ. Ս. Եկեղեցւոյ առաջին հիմնադիր Թադէոս ու Բարթոլոմէոս սրբազան առաքեալներուն, Ս. Գրիգոր Լուսաւորչի երեք տօներուն եւ ամէն սուրբերուն որ Հայոց լուսաւորութեան պատճառ եղած են եւ որոնց տօնը կատարել եւ զանոնք մասնաւորապէս պատուելու հրահանգ տըրուած է Տօնացոյցին եւ Օրացոյցին մէջ(*):

15. Ս. Սահակի մարմինը կը հանդէս Աշտիշատի մէջ եւ Ս. Մեսրոպինը Էջմիածնի մօտերը, Օշական գիւղը, փառաւոր մատուռներով:

16. Ս. Թարգմանիչներուն օրը զպրօցական տօն է. երախտագիտական հանգէտներ կատարելու ենք այն օրը, ի պատիւ անոնց Ս. Յիշատակին: Աղէին մէջ գրաւորներն ալ նոյն օրը կը վարձատրուին Ազա Յովսէփի Իզիրեանցի հասոտած մրցանակով:

13. Ի՞նչ կը պատկերէ թարգմանիչներուն եւ ինչո՞ւ: — 14. Ի՞նչ ընելու է ժողովուրդը: — 15. Բ՛ար եւ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի գերեզմանները: — 16. Թարգմանիչներու տօնին օրը ի՞նչ մրցանակ կը տրուի եւ որո՞ւ: Բ՛ար եւ Ազա Յովսէփ Իզիրեանցի:

(*) Բացարեկ թէ ի՞նչ է Տօնացոյցը եւ ի՞նչ է Օրացոյցը:

6. ԴԱՍ. — Ս. ՍԱՀԱԿԻ ՇԱՐԱԿԱՆԸ

17. Ս. Սահակ Պարբեւ որ վերջին ժառանգն էր Լուսաորչի Տան, ինչպէս տեսանք, նշանաւոր դեր մը կատարած է ազգ. եկեղեցական պատմութեան մէջ, իբրեւ առաքինի, բարեպաշտ ու ազգօգուտ կաթողիկոս: Ինք գրած է շատ շարականներ հայերէն լեզուով որոնք կ'եզուին եկեղեցիներուն մէջ: Ինք յօրինեց շարականներուն ութը եղանակները որ կ'երգուին մինչեւ այսօր:

18. Մենք ալ ի պատիւ այս սրբազան անձին, կ'երգենք հետեւեալ շարականը.

Որ յարմարոյ հարցն արքոյ մեզ գաւազան բոխեցեր. զիսահակ սուրբ հայրապետն, հովուէր զհոս քո Քրիստոս:

Որ զիսաւարն անգիտութեան մերագնեացս լուծեր զիսաւարն ծագեալ զոյս սովորոշոնցս Թորգոմայ:

Որ զհակոբեճեալ խորհուրդ քո, Տէր, տեսնաւք արքոյն ծանուցեր, յիշատակի սուրբ լիւր զսօնողաց աղաչանս:

17. Ուրի ինչէ՞ր բաւ Ս. Սահակ Պարբեւ: — Նոյն բուսակներն որ նշանաւոր մարդը կ'ապրէր: — 18. Ս. Սահակին տօնին օրը ի՞նչ տարական կ'երգենք:

7. ԴԱՍ. — ՈՍԿԵԴԱՐ

ԻԹ. Ինչպէս տեսանք Հայ մատենագրութեան մէջն նշանաւոր ժամանակն է հինգերորդ դարը, եկեղեցական թէ աշխարհական մեծամեծներ իրենց ազդեցութիւնը կը բանեցնեն՝ ուսում ու գիտութիւն տարածելու ազդին մէջ:

20. Բայց անկէ առաջ ալ, Հայերն ունեցած են մատենագրական շարժում մը, թէեւ այս մասին անկատար եւ հատուկօրէն աւանդութիւններ միայն ունինք այսօր, ինչպէս Գողթան երգերը՝ հայերէն լեզուով, նոյնպէս պատմութիւն՝ ասորեստանեան եւ յոյն լեզուով որ գտնուեցաւ Նինուէի արքայական մատենադարանին մէջ:

21. Նախաքրիստոնէական դարերու ուրիշ քանի մը մատենագիրներէ ետք, քրիստոնէութեան սկիզբները ունեցանք կրօնական եւ ալ նիւթերու վրայ երկեր, ինչպէս Յաճախաստուրը զոր գրած է Լուսաորչի, Ագաթանգեղոս անուն պատմական երկը զոր գրած է համանուն Հոովմայեցին որ արքունի քարտուղար էր, Զեւոնք Դրակի եկեղեցական ժամանակագրութիւնը, Ներսէս Պարբեւի կրօնական դրուածքները, Փաւստոս Բիւզանդի պատմութիւնը: Նոյն շրջանին Պրոյեքեսիոս կամ Պարոյր իբրեւ ճարտարախօս մեծ համբաւ ունեցաւ Սիթէնքի ու Հոովմի մէջ եւ հայ դպրութեանց պարծանք կը համարուի, նոյն իսկ օտար մատենագիրներու վկայութեամբ Հոովմի մէջ իր արձանը կանգնեցին՝ վրան գրելով սա բառերը. Թագուհին Հոռո՞՞ք ազաւորի Բանին:

22. Մեր կրօնական ու մատենագրական այս մեծ դէմքերէն զատ, աշխարհիկ նշանաւոր դէմքեր եւս ունեցած են իրենց յիշատակելի դործերը զորոնք պիտի տեսնենք Մովսէս Խորենացիի երկին մէջ, որ կը պատկանի Ե. դարուն:

19. Ո՞րն է Հայ մատենագրութեան Ոսկեդարը եւ ինչո՞ւ այսպէս կը կոչուի: — 20. Գերու գիտէն առաջ եղած մատենագրական տարածմէն ի՞նչ բեկորներ կը յիշուին: — 21. Քրիստոնէութեան սկիզբները ո՞րոնք մատենագիր կոչուեցան: — 22. Ոչ-եկեղեցական դէմքերու ժամանակագրութիւնը ո՞ր մատենագիրն մէջ ուսանելու ենք:

8 ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Զ. ԱՄՍՈՒԱՆ

Հայոց հին գրերը. — Մինչև Բրիտանիայի 40¹/₄ թուականը հայերը գործածեցին բնական գրեր, պատկերագրեր եւ լինյանայի լինյան եւ ասորի գրեր եւ նոյն լեզուներով կը կատարէին ժամերգութիւնները:

Հայոց գրերու գիւտը. — Ս. Սահակի օրով, Ս. Մեսրոպ գտաւ հայերէն տառերը եւ հայերէնի թարգմանուեցան եկեղեցական գրքեր, զպրոցներ բացուեցան եւ հայ լեզուն տարածուեցաւ:

Առաջին աշակերտները, իրենց վարդապետներուն քով կրթուելէ ետք, զրկուեցան Արեւմուտքի նշանաւոր դպրոցները, իրենց ուսումը աւարտելու համար. անոնք օգնեցին իրենց վարդապետներուն՝ Ս. Գիրքը հայերէնի թարգմանելու համար:

Երկրորդ աշակերտներն ալ շարունակեցին ուսման մէջ զարգանալ: Անոնք ալ Արեւմուտքի մէջ կատարելագործեցին իրենց ուսումը եւ ապա ունեցան նշանաւոր երկեր: Այս թուականը կը կոչուի հայ մատենագրութեան միակերպը:

Երախտագետ ըլլալու ենք այս պատմական վարդապետներուն եւ յարգելու ենք անոնց սուրբ միշտակերպ վանդի անոնք պատճառ եղան հայ ազգին մէջ երթող թեան Ս. Սահակի գերեզմանը Աշտիշատի մէջ, մեզի միջեցին Ս. Մեսրոպի գերեզմանը Օշականի մէջ, մեզի տարի լու են անոնց կատարած մեծ գործերը եւ ամէն տարի կատարելու ենք անոնց տօնը:

Ս. Սահակ Պարբէ հայրապետը ոչ միայն նշանաւոր է իրեւ կաթողիկոս եւ վերջին ժառանգ Լուսաւորչի այլ նաեւ իրեւ առաքինի ու բարեպաշտ մարդ: Ան յօրինած է շարականներ, ինչպէս եւ շարականներու երգերը եղանակները:

Ոսկեդարէն շատ առաջ ունեցած ենք Գողթան երգերը եւ այլն: Բրիտանուեթեան սկիզբներն ալ ունեցած են, ժառանգիրներ որոնք թէեւ օտար լեզուով գրած են, բայց հայ են եւ իրենց երկերը՝ եկեղեցական, մատենագրական ու պատմական մեծ արժէք ունին:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ. — ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵԶՐԵՐ

Հրահանգ. — Աշակերտը հետեւեալ սահմաններուն համապատասխանող աշխարհագրական եզրերը բող գտնէ.

1. Հողէ եւ քարէ կազմուած հասաւտ գետին մը որ շատ ընդարձակ է:

2. Աղի ջուրով լեցուն ընդարձակ տարածութիւն մը:

3. Շատ մեծ ծով մը:

4. Ցամաքին երեսէն շատ բարձր տեղերը:

5. » » քիչ մը » »

6. » » շատ ցած » »

7. Լեռին ու բլուրին է՛ն բարձր մասը:

8. Շղթայի մը օղակին պէս իրարու կից եղող լեռները:

9. Ընդարձակ ու տափարակ երկիր կամ գետին:

10. Ցամաք մը որ ծովով շրջապատուած է:

1. Ի՞նչ է ցամաքը: — 2. Ի՞նչ է ծովը: — 3. Ի՞նչ է ովկիանոսը: — 4. Ի՞նչ է լեռը: — 5. Բլուրը: — 6. Զո՞րը: — 7. Գագա՞քը: — 8. Լեռնաշղթա՞ն: — 9. Գագա՞քը: — 10. Կղզի՞ն:

2. ԴԱՍ. — ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ (*)

1. Թուրքիայի գիրքը. — Օսմանեան երկիրները կը տարածուին Ասիոյ արեւմուտքը ու Եւրոպայի արեւելեան հարաւակողմը:

(*) Այս եւ յաջորդ դասերու համար ուսուցչին կը յանձնարարուի առաջնորդ ունենալ Դ. Խաչկունցի ՕՍՄ. ԿԱՅՈՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

2. Վարչական լրգանակներ. — Այս ընդարձակ երկիր-
ները վարչական շրջանակներու բաժնուած են, որոնք
կը կոչուին վիլայեթ (կուսակալութիւն կամ նահանգ),
սանճագ (գաւառ), գազա (գաւառակ) եւ նահիյե (գիւ-
ղարուստ): [Տե՛ս Զ. պրակ էջ 7-8, Դաս 1-Յ]:

3. Եւրոպական Թուրքիոյ վիլայեթներն են.

Կուսակալութիւն

Կեդրոն

- | | | |
|--------------|----------------|--------|
| 1. Կ. Պոլսոյ | Կ. Պոլիս | Քաղաքը |
| 2. Էթերնէի | Անգլիանուպոլիս | » |
| 3. Սէլանիկի | Սէլանիկ | » |
| 4. Գոսովայի | Իսկիւլ | » |
| 5. Մանասթըրի | Մանասթըր | » |
| 6. Շքոտրայի | Շքոտրա | » |
| 8. Եանեայի | Եանեա | » |

Հրահանգ. — Եւրոպական քարտէսի մը վրայ ցոյց
տալ Թուրքիոյ վիլայեթները:

Նոյնը օրինակէյ՝ առանց գրելու վիլայեթներուն ա-
նունները, բայց գոնէ (վեր ի վերոյ) նշանակելով վիլայեթ-
ներուն դիրքը:

1. Աւստրիոյ ռ՝ մասերուն մէջ են Օսմանեան երկիրները: — 2.
Նոյն երկիրները ի՛նչ տեսակ վարչական բաժանումներ ունին: — 3. Ո-
րո՞նք են Եւրոպական Թուրքիոյ վիլայեթները:

3. ԴԱՍ. — ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ (Բ.)

1. Ասիական Թուրքիա. — Կուսակալութիւններն են.

- | | |
|-----------------------------|--------------|
| | Կեդրոն |
| 1. Տրապիզոնի կուսակալութիւն | (Տրապիզոն) |
| 2. Գասթէմուռիի » | (Գասթէմուռի) |
| 3. Խիւտալէնտիկեարի » | (Պրուսա) |
| 4. Այտընի » | (Իզմիր) |

- | | |
|---------------------------------|--------------|
| 5. Գոնեայի կուսակալութիւն | (Գոնեա) |
| 6. Ատանայի » | (Ատանա) |
| 7. Հալէպի » | (Հալէպ) |
| 8. Պէյրութի » | (Պէյրութ) |
| 9. Սուրիայի կամ Շամի » | (Շամի) |
| 10. Հիճազ-Եէմէնի » | (Եէմէն) |
| 11. Պատրայի » | (Պատրա) |
| 12. Պաղտատի » | (Պաղտատ) |
| 13. Մուսուլի » | (Մուսուլ) |
| 14. Վանի » | (Վան) |
| 15. Էրզրումի » | (Էրզրում) |
| 16. Պիթլիսի » | (Պիթլիս) |
| 17. Մամուրէթ իւլ Աղլիի » | (Մէզրա) |
| 18. Տիարպէքիւրի » | (Տիարպէքիւր) |
| 19. Սըվազի » | (Սըվազ) |
| 20. Էնկիւրիի » | (Էնկիւրի) |
| 21. Ժէզայիրի Պահրը Սէֆիտի կուս. | (Սազըզ) |
2. Նաեւ Ափրիկէի մէջ են .

Ղարպ Թարապուտի կուսակալութիւնը եւ
ԵԳԻՊՏՈՍԻ փոխարքայութիւնը որ օսմ. պետութեան
գերիշխանութիւնը կը վայելէ:

1. Որո՞նք են Ասիական Թուրքիոյ վիլայեթները: — 2. Իսկ Ասի-
այիկէի՞նք:

4. ԴԱՍ. — ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ (Գ.)

Սանճագներ կամ Միքեսարքոքիւններ. — Եւրոպական
Թուրքիոյ վիլայեթներուն մէջ են հետեւեալ սանճագները:

1. Կ. Պոլսոյ վիլայեթին մէջ են Սթամպուլի միւ-
թէսարքութիւնը իր արուարձաններով, եւ Չաթալճայի
սանճագը, Պոլսոյ մօտերը:

2. Էտիրնէի կուսակ. մէջ՝ 6 սանձագ. — Էտիրնէ, Կիւմիւլճինէ, Թէքիրտաղ, Տէտէաղաճ, Կէլիպօլու, Գըրգ քիլիսէ:

3. Սէլանիկի կուսակ. մէջ՝ 3 սանձագ. — Սէլանիկ, Սէրէշ, Տրամա:

4. Գօսօլարի կուսակ. մէջ՝ 5 սանձագ. — Իւսկիւլ, Բրիշթինէ, Եէնի Պաղար, Իիէք, Բրէզրին:

5. Մանասթրի կուսակ. մէջ՝ 5 սանձագ. — Մանասթր, Սէրֆիէ, Տէպրէ, Իլպիսան, Բորիճա:

6. Շքոտրայի կուսակ. մէջ՝ 2 սանձագ. — Շքոտրա, Տրաշ:

7. Եանեայի կուսակ. մէջ՝ 4 սանձագ. — Եանեա, Էրկէրի, Բրէվէդա, Պէրաթ:

Եւրոպական Թուրքիոյ մէջ ո՞ր սանձագները կան եւ ո՞ր վիլայէթներու մէջ են:

5. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Ասիական Թուրքիոյ կուսակալութիւնները գրեցէք պարսկերէնի կարգով: Անոնց դէմ գրեցէք նաեւ դասական յորջորջումները՝ երեւ զիտեք, օրինակ՝ Շամ, Դարմակոս, Իզմիր, Զախունիա. Տրապիզոն, Պոնտոս. Էւայն:

2. Ալբանիայի կարգով գրեցէք Եւրոպական Թուրքիոյ 27 սանձագները՝ ամեն մէկուն ղիմաց գրելով թէ ո՞ր կուսակալութեան մէջ են:

3. Ո՞րն է վիլայէթին մէջ պետական գլխ. պաշտօնեան
 » » սանձագին » » » »
 » » գազային » » » »
 » » նահիլէին » » » »

6. ԴԱՍ. — ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ (Դ.)

Ասիական Թուրքիոյ սանձագներն են.

1. Տրապիզոնի կուսակ. մէջ՝ 4 սանձագ. — Տրապիզոն, Ճանիկ, Լաղիստան եւ Կիւմիւլճանէ:

2. Գասթէմունիի կուսակ. մէջ՝ 4 սանձագ. — Գասթէմունի, Բեանզըրը, Սինոպ, Պոլու:

3. Խլաւալէնի կուսակ. մէջ՝ 5 սանձագ. — Պրուսա, Գարասի, Էրթոլըրու, Բէօթաշեա, Գարասիսարը Սահիպ:

4. Այտընի կուսակ. մէջ՝ 5 սանձագ. — Իզմիր, Մէնիշէ, Այտըն, Սարուխան, Տէնիզլի:

5. Գոնեաի կուսակ. մէջ՝ 5 սանձագ. — Գոնեա, Նիյսէ, Պուրտուր, Սպարթա, Թէքէ:

6. Ատանայի կուսակ. մէջ՝ 4 սանձագ. — Ատանա, Ճէպէլի Պէրէքէթ, Խօզան, Իչելի:

7. Հալէպի կուսակ. մէջ՝ 3 սանձագ. — Հալէպ, Մարաշ, Ուրֆա:

8. Պէյրութի կուսակ. մէջ՝ 5 սանձագ. — Պէյրութ, Աքիա, Շամ Թարապուս, Լաթաքիէ, Պալքա (կամ Նապլուս):

9. Սուրիայի կուսակ. մէջ՝ 4 սանձագ. — Շամ, Համա, Հօրան, Մաան:

10. Հիճազ-Եմէնի կուսակ. մէջ՝ (2+4) = 6 սանձագ. — Մէքքէ, Ճիտտէ + Սանա, Ասրը, Հօտէյտա, Թա'աա:

11. Պասրայի կուսակ. մէջ՝ 4 սանձագ. — Պասրա, Միւնթէֆիք, Նէճէտ, Ամարա:

12. Պաղտատի կուսակ. մէջ՝ 3 սանձագ. — Պաղտատ, Հիլիէ, Բէրպէլա:

13. Մուսուլի կուսակ. մէջ՝ 3 սանձագ. — Մուսուլ, Շէհրիզօր, Սիւլէյմանիյէ:

14. Վանի կուսակ. մէջ՝ 2 սանձագ. — Վան, Հէք-քեարի:

15. Էրզրումի կուսակ. մէջ՝ 3 սանձագ. — Էրզրում, Պայազիտ, Էրզինձան:

Ասիական Թուրքիոյ մէջ ո՞ր սանձագները կան եւ ո՞ր վիլայեթներու մէջ են:

7. ԴԱՍ. — ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ (b.)

(Շար. 6. Դասին)

16. Պիթլիսի կուսակալութեան մէջ՝ 4 սանձագ. — Պիթլիս, Սղերք, Մուշ, Կինձ:

17. Մամուրէթ իւլ Աղիզի կուսակ. մէջ՝ 3 սանձագ. — Խարբութ, Մալաթիա, Տէրսիմ:

18. Տիարպէքիւրի կուսակ. մէջ՝ 3 սանձագ. — Տիարպէքիւր, Մարտին, Արղընի-Մատէն:

19. Սըվազի կուսակ. մէջ՝ 4 սանձագ. — Սըվազ, Ամասիա, Գարաշիսարի շարգի եւ Թօգաթ:

20. Էնկիւրիւի կուսակ. մէջ՝ 4 սանձագ. — Անդաթէ, Գըրշէհիւր, Գալսէրի, Եօզղաա:

21. Ճէզայիւրի Պահրը Սէֆէտի կուսակալութիւնը կըլդինքէ կը բազկանայ եւ ունի 4 սանձագ. — Հոթոս, Միտիլի, Սազըզ, Լիմնոս:

Ուրոյն սանձագներ. — Բանի մը սանձագներ ալ կան որոնք այս կամ այն կուսակալութեան չեն պատկանիր եւ իրենց վարչական յարաբերութիւնը ուղղակի կ' Պոլսոյ կառավարութենէն կախում ունին: Ասոնք են.

1. Իլդիւտ կամ Գօճա Ելի (Մարմարայի ու Սիւ ծո՛ւղու վրայ):

2. Պիզա, (Մարմարայի, Արշիպեղագոսի ծովերուն եւ Չանազ-Գալէի ու Խիւտալէնտիկեարի միջեւ):

3. Գուստը Շէրիֆ, Երոզասղեւ, (Պէյրութի եւ Միջերկրական ծովին միջեւ):

4. Չօր սանձագը (Եփրատի ու Հալէպի վիլայէթին միջեւ): Գլխաւոր քաղաքն է Տէյր:

Որո՞նք են Ասիական Թուրքիոյ միւս սանձագները: Ասոնցմէ զան ո՞ր սանձագները կան որ ուղղակի Պոլսոյ կեդրոնական կառավարութենէն կախում ունին:

8. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Ալբուքէնի կարգով գրեցէք Ասիական Թուրքիոյ բոլոր սանձագները՝ ամեն մեկուն դիմ գրելով քե ո՞ր վիլայէթին մէջ են:

2. Որոշեցէք քե անոնց մէջ որո՞նք են պատմական քաղաքներ եւ գրեցէք անոնց նախնական յորջորջումը:

3. Ձեր գտնուած գիւղը կամ քաղաքը ո՞ր նահիյէին, ո՞ր գազային, ո՞ր սանձագին եւ ո՞ր վիլայէթին կը պատկանի:

4. Ասիական Թուրքիոյ բարտեսի մը վրայ ցոյց տուէք վիլայէթներուն դիրքը եւ քսէք անունները:

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ

1. Ի՞նչ է բաժանումը. — Առաջին օրինակ. — 28 շրուշ կայ քովս եւ կ'ուզեմ քանի մը հատ մեծ թուաբանութիւն գնել. Գրավաճառը կ'ըսէ որ հատը 7 շրուշի կուտամ, կրնա՞ք գիտնալ թէ 28 շրուշով քանի՞ թուաբանութեան զսասգիրք կրնամ գնել. Յայտնի է որ ես կրնամ գնել այնքան թուաբանութիւն որքան 7 շրուշ կայ 28 շրուշին մէջ. Ուրեմն պէտք է փնտռեմ թէ 28ին մէջ քանի՞ հատ 7 կայ. Աւասիկ այս փնտռելու գործողութիւնը բաժանումով կ'ըսուի. Հետեւաբար 7ը պէտք է բաժնեն 28ին մէջ. Հիմա գտնելու համար թէ 7ը քանի՞ անգամ կայ 28ին մէջ, 7ը կը հանենք 28էն այնքան անգամ որքան կարելի է, $28 - 7 = 31$ (1 անգամ), $21 - 7 = 14$ (2 անգամ), $14 - 7 = 7$ (3 անգամ), $7 - 7 = 0$ (4 անգամ). Ուրեմն 7ը 4 անգամէն հանեցին 28էն՝ բան չմնաց՝ ըսել է թէ 7ը 28ին մէջ կայ 4 անգամ, հետեւաբար 28 շրուշով ես կրնամ գնել 4 հատ թուաբանութիւն, հատը 7 շրուշէն:

1. Բաժանման օրինակ մը տուէ:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 1. Մարդ մը 64 շրուշ 16 զլ/դ գուլպայ գնեց, մէկ զլ/դը քանի՞ շրուշ եկաւ. — 2. Խնձոր պան մը ծախեց 8 ֆէն 72 շրուշի, մէկ ֆէսը քանի՞ շրուշ արժեց. — 3. Պզտիկ աղջիկ մը 5 ամսուան մէջ 15 շրուշ խնայեց, մէկ ամսուան մէջ քանի՞ շրուշ խնայած էր. — 4. Ընտանիք մը 20 օրուան մէջ 80 օխ կաթ կը գործածէ, օրական քանի՞ օխ կաթի պէտք ունի. — 5. Զբաղացի մը քարը մէկ երկվայրկեանի մէջ կը դառնայ 45 անգամ, քանի՞ անգամ կը դառնայ մէկ վայրկեանի մէջ եւ քանի՞ անգամ առաւօտէն մինչեւ իրիկուն 12 ժամը

ուան մէջ. — 6. Վաճառական մը գնեց 138 ծրար կտաւ, մէկ ծրարը 48 շրուշէն, քանի՞ շրուշ պիտի տայ. — 7. Պարագ հող մը կայ քաղաքին մէջ, տէրը կը ծախէ զայն, կ'որոշեն որ հարկը քառակուսի մէթրը արժէ 192 շրուշ. Ենչ պիտի արժէ ամբողջ հողը եթէ անոր մեծութիւնը ըլլայ 212 հատ 100 քառակուսի մէթր. — 8. Փայտ ծախող մը 200 չէքի փայտ գնեց 3000 շրուշ. հիմա այնպէս մը ծախեց որ չէքի գլուխ 8 շրուշ վաստկեցաւ, ամբողջ փայտը քանի՞ շրուշ ծախեց. — 9. Մարդ մը ամիսը 8ո սկի ամսական ունի, տարին քանի՞ շրուշ կը ստանայ եւ քանի՞ շրուշ կը մնայ իրեն եթէ իր տարեկան ծախքն ըլլայ 60 ոսկի. (մէկ ոսկին 108 շրուշէն հաշուեցէք). — 10. Բանուր մը 35 օրուան մէջ շահեցաւ 230 շրուշ օրը քանի՞ շրուշ կ'առնէր. — 11. Կոշկակար մը շարաթը կ'առնէ 54 շրուշ ուրիշ մը կ'առնէ 66 շրուշ մէկը միւսէն օրական քանի՞ շրուշ աւելի կ'առնէ:

2 ԴԱՍ.— ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

2. Բաժանումի սահմանը. — Նախորդ օրինակին մէջ մենք փնտռեցինք թէ 28ին մէջ քանի՞ հատ 7 կայ եւ ըսինք որ 7ը բաժնեցինք 28ին մէջ. Ուրեմն. երբ կը փնտռենք թէ թիւ մը քանի՞ անգամ կը պարտաւորուի ուրիշ թիւի մը մէջ, այս է ԲԱԺԱՆՈՒՄԸ:

2. Ի՞նչ բնի է թիւ մը ուրիշ թիւով բաժնել:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 12. 5 մէթր կերպաս գնեցի 65 շրուշի, մէկ մէթրը քանի՞ շրուշ եկաւ. — 13. 5 կողովի մէջ 60 խնձոր կայ, ամէն մէկ կողովին մէջ քանի՞ խնձոր կայ. — 14. 32 մէծ խոթեով կրնանք 8 հատ բանթալոն գնել, մէկ բանթալոնը քանի՞ մէծ խոթի կ'արժէ. — 15. 12 ծրար սպարմաշէթի մէջ 96 հատ մամ կայ, մէկ ծրարը քանի՞ մամ կը պարտաւորուի. — 16. Մէկ ժամը 60 վայրկեան ունի, 12 ժամուան մէջ քանի՞ վայրկեան կայ. — 17. Այգիի մը մէջ 35 կարգ որթատունկ կայ, ամէն մէկ կարգին վրայ 154 տունկ, եթէ ամէն մէկ տունկը 8 ողկոյղ տայ, ամբողջ այգին քանի՞ ողկոյղ կուտայ. — 18. Եթէ մէկ որթատունկը երկու օխ շերտ տայ, ամբողջ խաղողը քանի՞ օխ շերտ կուտայ:

3 ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

3. Բաժանելի, բաժանարար, բանորդ. — Այն թիւը զոր կը բաժնենք կը կոչուի բաժանելի, այն թիւը որով կը բաժնենք, կ'ըսուի բաժանարար, իսկ երրորդ թիւ մը որ այս բաժանումէն կ'ելլէ, կը կոչուի քանի:

3. Ի՞նչ կը կոչուի այն թիւը զոր կը բաժնենք: — Իսկ այն թիւը որով կը բաժնենք: — Բաժանման արդիւնք:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 19. Եթէ մարդ մը 4 ժամէն 24 հազարամէթր տեղ կ'ընայ քայլել, մէկ ժամէն քանի՞ հազարամէթր կը քայլէ: — 20. 7 հոգի մէկտեղ դացին ճաշարան մը ճաշելու, եթէ 35 զըշ վճարեն ամէնքը մէկտեղ, մէկ հոգիին քանի՞ զըշ բաժին կ'իյնայ: — 21. Երկըրը 24 ժամուան մէջ արեւին շուրջը կը դառնայ, ուրեմն քանի՞ երկվայրկեանէն կը դառնայ արեւին շուրջը: — 22. Վաճառական մը ձեռք մը զգեստ 250 զըշի ծախելով 45 զըշ կը շահի, 10 ձեռք այս տեսակ զգեստէ քանի՞ զըշ կը շահի: — 23. 2ի մը մէկ վայրկեանի մէջ կը քայլէ 122 մէթր տեղ, ձիւտըրը քաղաքէն ելլելով 45 վայրկեանէն հասնու Բ. գիւղը. յետոյ անկից մեկնելով 16 վայրկեանէն հասնու Բ. գիւղը. ապէս ալ մեկնելով 58 վայրկեանէն հասնու Գ. գիւղը: Հիմա գտէք թէ այս երեք գիւղերէն ամէն մէկը քանի՞ մէթր հեռու է քաղաքէն: — 24. Մարդ մը կը բանեցնէ օրը 8 բանորդ և ամէն մէկին օրովէք կուտայ 7 զըշ: օրը քանի՞ զըշ: և շարժը քանի՞ զըշ վճարած կ'ըլլայ ամէնուն:

4. ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

4. Ի՞նչ է բաժանումը. — Երկրորդ օրինակ. — Կ'ուզենք 20 հատ զրչածայր բաժնել 5 տղայի մէջ, ամէն մէկ տղային քանի՞ զրչածայր կ'իյնայ: Ըսել է թէ հիմա սա 20 հատ զրչածայրը պիտի բաժնենք հինգ հաւասար մասերու: Աղէկ. կ'առնենք առ տուփին մէջէն 5 հատ զրչածայր և ամէն մէկ տղային մէկ մէկ հատ կուտամ. այն ատեն տուփին մէջ կը մնայ 15 զրչածայր, իսկ ա-

մէն մէկ տղան կ'առնենայ 1 զրչածայր: Յետոյ 5 հատ ալ կ'առնենք և ամէն մէկուն մէկ մէկ հատ կուտամ. տուփին մէջ կը մնայ 10 հատ, իսկ ամէն մէկ տղայ կ'առնենայ 2 հատ: Յետոյ 5 հատ ալ կ'առնենք, տուփին մէջ կը մնայ 5 հատ և ամէն մէկ տղայի քով կ'ըլլայ 3 հատ. վերջին 5ն ալ կ'առնենք. տուփին մէջ բան չի մնար. ըսյց ամէն մէկ տղայ 4 զրչածայր կ'առնենայ: Սպաւս 20—5=15: 15—5=10: 10—5=5: 5—5=0: 5 տղային ամէն մէկը 4 հատ ունի. $4+4+4+4+4=20$: Աւարիկ առ ալ բաժանում է:

4. Բաժանումի օրինակ մը տուէք, գործողութիւնը բացատրելու համար: Ի՞նչ բնի է բաժնել:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 25. Մայր մը օխա մը կեռաս գնեց և բաժնեց իր 5 զաւակներուն մէջ, ամէն մէկ զաւակին քանի՞ կեռաս ինկաւ, եթէ մէկ օխան 45 կեռաս կը պարունակէր: — 26. Մէկը կ'ուզէ 104 ընկոյղ բաժնել 8 տղաներու մէջ. ամէն մէկուն քանի՞ հատ կ'իյնայ: — 27. Վաճառական մը 112 մէթր չափա կը ծախէ, մէթրը 65 զըշէն, քանի՞ զըշ պիտի առնէ: — 28. Տղայ մը մէկ վայրկեանի մէջ 67 մէթր տեղ կը քայլէ, ամէն ըրդ ժամ մը և 5 վայրկեան քալեց այս տղան, ուրեմն քանի՞ մէթր ճամբայ բռաւ: — 29. Մարդ մը շարժը 125 զըշ ծախք կ'ընէ, ամէն զըշ տարին որ 52 շաբաթ է, քանի՞ զըշ ծախք կ'ընէ: — 30. Պարտիզպան մը օրը կրնայ 15 զըշի ծաղիկ և 38 զըշի բանջարեղէն շուկան բերել, մէկ ամսուան մէջ ի՞նչ կը շահի: — 31. Եթէ այս պարտիզպանը օրը 12 զըշ ալ ծախք բնէ պարտէզին համար, իր զըշ շահը ի՞նչ կ'ըլլայ: — 32. Թղթալաճառ մը 12 ծրար թուղթ ծախեց 60 զըշի, ամէն մէկ ծրարը քանի՞ ծախեց: — 33. Երկրագործ մը 15 կողով գետնախնձոր թաղեց հողին տակ, ամէն մէկ կողովը կը պարունակէր 28 օխա և ամէն մէկ օխան դարձան ժամանակ կրնայ արծել 2 զըշ: քանի՞ զըշի տպարանք ունի հողին տակ այս երկրագործը: — 34. Աշակերտ մը սա միջին թիւերը առած է մարտ ամսոյ մէջ. հայերէն՝ 8. Թուրք. 6. պատմ. 7. գիտութիւններ 8. բարոյագիտ. 4. գիր 5.

գծագր. 7. Խնչ է այս աշակերտին ամսական մեջին թիւը: — 35. Արտի մը մէջ 42 դէզ կայ և ամէն մէկ դէզին մէջ 30 խուրձ, քանի՞ խուրձ է արտին հունձքը:

5 ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

5. Բաժանումի մէկ ուրիշ սահմանը. — Նախորդ դասին մենք խնդիր մը լուծեցինք: Այս խնդրին նայելով բաժնեղձ կը նշանակէ թիւ մը այնքան հաշուար մասերու վերածել, որքան միտքիս կայ միւս թիւին մեջ:

5. Բաժանման մէկ ուրիշ սահմանը տուէ:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 36. 8 աղջկ կողով մը կեռաս բաժնեցին մէջերին, կողովին մէջ 176 հատ կեռաս կար, ինչ ինչ ամէն մէկուն բաժնէր: — 37. Ընտանիք մը 16 օրուան ճամբայ ըրաւ և ծախեց 128 մէճիտի, օրը քանի՞ մէճիտի ծախք ըրաւ: — 38. Գերձակ մը 42 մէթրոնց ծրար մը չուխայ գնեց և անով շինեց 7 ձեռք զգեստ, ամէն մէկ ձեռք զգեստին քանի՞ մէթր գնաց: — 39. Հովիւ մը ամիսը կը վաստակի 112 զրշ: քանի՞ ամիսէն կընայ վաստակիլ 560 զրշ: — 40. Գարբին մը մանգաղ մը շինելու համար, երկաթի կտորը 12 անգամ կրակի մէջ կարմրեց և ամէն մէկ անգամին 44 մուրճի հարուած տուաւ անոր. քանի՞ հարուածով շինուեցաւ մանգաղը:

6. ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

6. Բաժանելի, բաժանարար, բանորդ. — Այն թիւը զոր կ'ուզենք մասերու բաժնել, կը կոչուի բաժանելի, այն թիւը որ կը ցուցնէ թէ քանի՞ մասերու բաժնուելու է, կըսուի բաժանարար. ամէն մէկ մասը, որ բաժանուածէն կ'ելլէ, ֆակտոր կ'ըսուի. Այսպէս, նախորդ խնդրին մէջ, 20ը բաժանելի է, 5ը բաժանարար, 4ը՝ ֆակտոր:

6. Երբ բաժին ընել ուզենք, ի՞նչ կը ցուցնեն բաժանելի, բաժանարար եւ ֆակտոր:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 41. Հացագործ մը իր մէկ յաճախորդին 100 հատ հաց տուած է, 10 հացը կը կշռէ 8 օխ և օխան կ'արժէ 1 զրշ: քանի՞ զրշ տուելիք ունի հացագործը: — 42. Գրավաճառ մը 15 ծրար գերք զրկեց դուրս, եթէ ամէն մէկ ծրարը կը պարունակէ 12 կտոր գերք և ամէն մէկ գերքը կ'արժէ մեջին հաշիւով 4 զրշ, գրավաճառը քանի՞ զրշ-ի գերք զրկած կ'ըլլայ: — 43. Ագարակատեր մը քաղաքի շուկան կը զրկէ 3 հատ եղ, 22 ոչխար և 4 կով ծախելու. եղները կը ծախէ հատը 485 զրշ-ի, ոչխարները հատը 42ի և կովերը հատը 300ի, քանի՞ զրշ կ'առնէ ընդամենը: — 44. Մտուկ մը օճառ կը կշռէ 48 օխ, գնուողը մէկ օխային 4 զրշ կը սակարկէ, բայց օճառը պարպելէ յետոյ կը կշռեն դատարի սնտուկը որ կուգայ 9 օխ, քանի՞ զրշ պիտի վճարուի օճառին: — 45. Վաճառական մը 72 հատ աթոռ ունի, 6 տուգինաւ ծախեց, քանի՞ աթոռ մնաց իրեն:

7. ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

7. Բաժանումի մնացորդը. — Առաջին օրինակ. — Ինչ 22 զրշ, կայ, շուկայ կ'երթամ չաքար գնելու. մարդը կ'ըսէ որ օխան 4 զրշ-ի կուտամ. բեւէ է պիտի գնենք այնքան օխա որչափ 4 զրշ, կայ 22 զրշ-ին մէջ: Արդ 22—4=18: 18—4=14: 14—4=10: 10—4=6: 6—4=2: Ինչպէս կը տեսնէք, 4ը 5 անգամ հանեցինք 22էն, մնաց 2, եւ 4ը 2էն չ'ելլեր, որովհետեւ անկէ աւելի մնծ է: Աւտակ աս 2ը բաժանուելին մնացորդն է:

7. Հասկցուցէք թէ ի՞նչ է բաժանման մնացորդը:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 46. Տան մը պատուհանները գոցելու համար 56 կտոր քառակուսի ապակի պէտք է, եթէ ամէն մէկ պատուհանին համար 8 կտոր ապակի երթայ, կընա՞ր ըսել թէ տուել քանի՞ պատուհան ունի: — 47. 6 հատ պղտիկ աղջիկներ իրենց մէջ բաժնեցին 50 հատ ընկզղ, ամէն մէկուն քանի՞ հատ ինչու և ի՞նչ տուեցաւ: — 48. Եթէ 3 հոգի իրենց մէջ բաժնեն 42 զրշ, և 5 հոգի ալ իրենց մէջ բաժնեն 65 զրշ, առաջիններու բաժինը աւելի շատ կ'ըլլայ, թէ վերջիններունը: — 49. Վանի՞ պատառաքաղ կայ 4 տուփի մէջ, եթէ ամէն մէկ տուփը 2ալկան երկոտանեակ կը պարունակէ:

8. ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

Յ. Բաժանումին մնացորդը. — Երկրորդ օրինակ. — Եթէ 22 զրշի տեղ 22 հատ գնտակ ունենանք եւ բաժնենք 5 տղաքներուն, ամէն մէկուն կ'իյնայ 4 գնտակ եւ 2 գնտակ ալ կ'աւելնայ: Այս 2ը մնացորդ է: Ուրեմն երբ բաժանարարը բաժանելիէն կը հանենք սաչափ անգամ ու յետոյ կը մնայ այնպիսի թիւ մը որ բաժանարարէն աւելի փոքր է, այդ թիւը կը կոչուի մնացորդ:

8. Ուրիշ օրինակ մ'ալ տւե՛ք: Ի՞նչ քսել է բաժանման մնացորդ:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 50. Պատիկ տղայ մը գերբ մը առաւ կարգալու, քանի՞ օրէն պիտի լինցնէ այս գերբը, եթէ օրը 5 երես կարգայ եւ գերբն ալ 75 երես ունենայ: — 51. Բանւորուհի մը երեք կտոր տանթէլա բանեցաւ. առաջին կտորը 35 մէթր, երկրորդը 18, երրորդը 21 մէթր երկար, եւ ծախեց մէկ մէթրը 3 զրշի, քանի՞ զրշ առաւ ընդամենը:

9. ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

Յ. Բաժանումին մնացորդը միշտ աւելի փոքր է բաժանարարէն, — Այո՛, եթէ բաժանման մէջ մնացորդը աւելի մեծ ըլլայ բաժանարարէն, այն ատեն կրնանք անգամ մըն ալ բաժնել. օրինակ եթէ 5ը 26ի մէջ բաժնենք 5 անգամ, կը մնայ 6. յայտնի է որ 6ը 5էն մեծ է եւ 5ը անգամ մըն ալ կը բաժնուի անոր մէջ, ուրեմն 6ը մնացորդ չէ. հոս մնացորդը 1 է:

10. Ճիշտ բաժանում. — Երբ բաժանումի մէջ մնացորդ չմնայ, կ'ըսուի թէ բաժանումը ճիշտ է, կամ ճիշտ բաժանուեցաւ:

9. Բաժանման մնացորդը բաժանարարէն մեծ է թէ պզտիկ: — 10. Բաժանման զործողութիւնը ե՞րբ ճիշտ է:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 52. Ճամբորդ մը միտքը դրած է 84 հազարամէթր ճամբայ երթալ, քանի՞ ժամէն կրնայ երթալ եթէ ժամը 8 հազարամէթր քայլէ: — 53. Պարտեզի մը տէրը կողով մը խնձոր բաժնեց շատ մը տղաքներու, կողովին մէջ 104 խնձոր կար եւ ամէն մէկ տղային 13 խնձոր բաժին ինկաւ. տղաքները քանի՞ էին: — 54. Գիւղացի մը 4 ժամուան մէջ 28 հազարամէթր տեղ քալեց, մէկ ժամը ո՞րչափ հազարամէթր ճամբայ կըտրեց: — 55. Մարդ մը օրը 63 զրշ կը վճարէ քանի մը բանւորներու, ամէն մէկուն օրականը 7 զրշ ըլլալով, բանւորները քանի՞ հոգի են: — 56. Ժամացոյց մը օրը 6 վայրկեան առաջ կ'երթայ, քանի՞ օրէն մէկ ժամ առաջ գացած կ'ըլլայ:

10. ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

11. Բաժանման նշանը. — Բաժանումը սովորաբար սա (:) նշանովը կը ցուցուի՝ որուն կ'ըսուի բաժանելու եւ կը դրուի բաժանելիին ու բաժանարարին մէջտեղը: Այսպէս 24:8. կը կարդացուի 24 բաժանեալ 8:

11. Ո՞րն է բաժանման նշանը:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 57. Եթէ մէկ երկուսանեակ շապիկը 60 զրշ արժէ, մէկ շապիկը քանի՞ կ'արժէ: — 58. 144 զրշով քանի՞ արշն չուխ կրնանք գնել, եթէ մէկ արշնը 24 զրշ արժէ: — 59. Գարոցի մը մէջ շարաթը 16 գրեչ կը տրուի աշակերտներուն, մէկ տուփ գրեչը որ 112 հատ կը պարունակէ, քանի՞ շարաթէն կը լինայ: — 60. Մառուդի մը երկու կողմը 64 ծառ կայ, կեսը սաղին կեսը անդին, քանի՞ ծառ կայ ամէն մէկ կողմը: — 61. Վարպետ մը օրական 18 զրշով գործ մը լինցուց եւ առաւ 168 զրշ քանի՞ օրէն աւարտեց ուղի գործը: — 62. Երկու երկուսանեակ (տուղինա) ընկնող ունիմ եւ կ'ուզեմ ընկերներու հետ բաժնել, քանի՞ հատ կ'լինայ ամէն մէկուն եթէ 3 հոգի ըլլանք, Քանի՞ հատ կ'լինայ եթէ 4, 6, 12 հոգի ըլլանք:

11. ԴԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

12. Իճնպէս կրնանք ընել բաժանումը. — Իրաւ է որ թիւ մը ուրիշ թիւի մը մէջ բաժնելու համար կրնանք բաժանարարը իրարու ետեւէ բաժանելիէն հանել, մինչեւ որ ճիշտ բաժնուի, կամ մնացորդ տայ: Բայց ասի շատ երկար է եւ ամենեւին այս տեսակ բաժանում չենք ընել: Սովորական բաժանումը կ'ընենք հաշուի առնելով բաժանարարին եւ քանորդին թիւերը:

12. Իճնպէս կը կատարուի բաժանումը:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 63. Ժամացոյց մը որը 5 վայրկեան առաջ կ'երթայ, քանի՞ օրէն 45 վայրկեան առաջ գացած կ'ըլլայ: — 64. Սուրհանդակ մը 6 ժամէն 54 հազարամէթր տեղ գնաց, ժամը քանի՞ հազարամէթր տեղ գնաց:

12. ԴԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

13. Իճնպէս կրնանք գիտնալ թէ քանորդը մէկ կամ մէկէ աւելի բուանդան կ'ունենայ. — Օրինակ. 164ին մէջ կ'ուզենք բաժնել 38: Այս 38 բաժանարարին ոչ կողմը գրէք զերօ մը՝ կ'ըլլայ 380, որ 168էն մեծ է եւ անոր մէջ չի բաժնուիր, իսկ 38ը կը բաժնուէր: Ուրեմն գիտնալու համար թէ քանորդը քանի՞ թուանշան պիտի ունենայ, բաժանարարին ոչ կողմը կ'ու հլոյններ զերօ մը. բաժանարարը այն տուն 10 տնդամ կը մեծնայ. յետոյ կը գրտենք թէ 10 անգամ մեծցած բաժանարարը կրնայ բաժնուիլ բաժանելիին մէջ. եթէ չի բաժնուիր, ըսել է թէ քանորդը մէկ թուանշան պիտի ըլլայ, իսկ եթէ կը բաժնուի, ըսել է թէ քանորդը մէկէն աւելի եւ գոնէ երկու թուանշան կ'ըլլայ:

13. Իճնպէս կրնանք գիտնալ թէ քանորդը մէկ կամ մէկէ աւելի բուանդան պիտի ունենայ:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 65. 12 հատ շապիկ շինելու համար 48 արշըն կտաւ գործածեցինք, մէկ շապիկը քանի՞ արշըն է:

13 ԴԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

14. Բաժանարարն ալ քանորդն ալ մէկ մէկ բուանդան ունին. — Առաջին օրինակ. — Բաժանարարն ալ, քանորդն ալ մէկ մէկ թուանշան ունենալու համար, պէտք է որ բաժանելին 100էն պզտիկ ըլլայ: Այսպէս, 28ը՝ որ 100էն փոքր է՝ բաժանելի ըլլայ, 7ը բաժանարար, գիտենք որ 4 անգամ 7ը՝ կ'ընէ 28. ուրմն քանորդն է 4, որ մէկ թիւ է: Այս տեսակ բաժանումներու մէջ քանորդը անմիջապէս կը գտնենք բազմապատկուիչի ան աղիւսակին մէջ:

14. Բաժանելի 28ը 7ով:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 66. Բաժնեցէք 35ը 7ով: 48ը 6ով: 54ը 9ով: 16ը 4ով: 81ը 9ով: 72ը 8ով: 42ը 7ով: 56ը 8ով: — 67. Բարեկենդանի արձակուրդին, Յակօրը միտք ունի 40 խոզեր լուծել, որը 5 խոզեր լուծելով՝ քանի՞ օրէն կ'աւարտէ: — 68. Նարկիկը ըսին որ այս տարուան արձակուրդը 42 օր պիտի ըլլայ, չիմա՞ Նարկիկը կ'ուզէ համրել թէ քանի՞ շաբաթ կ'ընէ: — 69. Եղբայրս 72 գրչածայր ունէր, ասոր քառորդը ինծի տուաւ, ըսել է՝ ես քանի՞ գրչածայր ունիմ չիմա: — 70. 8 մէթր կերպաս գնեցի եւ 48 դըշ տուի, մէկ մէթը քանի՞ եկաւ: — 71. Մարդ մը ձիով 98 հազարամէթր տեղ գնաց 7 ժամուան մէջ, մէկ ժամէն քանի՞ հազարամէթր ճամբայ կարեց: — 72. Վաճառական մը 9 հոմանոց ծախեց եւ 36 քառորդ մէծիտի տուաւ, հատը քանի՞ քառորդի տուաւ:

14. ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

15. Բաժանարարն ու Բանորդը մէկ մէկ բուանդան են.
— Երկրորդ օրինակ. — Կ'ուղենք 53ը 9ով բաժնել: Գիտենք
որ 5 անգամ 9 կ'ընէ 45, իսկ 6 անգամ 9, կ'ընէ 54.
մեր բաժանելին է 53, որ 45էն մեծ է, բայց 54էն փոքր
է: Ըսել է թէ 9ը 53ի մէջ 5 անգամ կայ եւ մնացորդ
կուտայ այնքան որքան 45ը պակաս է 53էն, այսինքն
8ը. հա ալ քանորդը գտանք բազմապատկութեան ա.
ղիւստիկն միջոցաւ:

15. Բաժնեցէ՛ 53ը 9ով:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 73. Բաժնեցէք 37ը 7ով: 51ը 6ով:
58ը 9ով: 19ը 4ով: 87ը 9ով: 78ը 8ով: 45ը 7ով: 60ը 8ով:
74. Երկու քաղաքներ իրարմէ 63 հազարամէթը հեռու են, քանի
ժամէն կարելի է մէկ քաղաքէն միւսը երթալ, եթէ մարդ ժամը
7 հազարամէթը կտրէ: — 75. Գործաւոր մը շաբաթ օր առաւ
64 զրշ: շաբաթական, օրը քանի զրշ կը վաստկէր: — 76. 4 տղայ
իրենց մէջ բաժնեցին 14 խնձոր, ամէն մէկին քանի՞ հատ ինկաւ:

15. ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

16. Երէ բաժանարարը մէկէ աւելի բուանդան ունենայ,
քանորդը կրնայ մէկ բուանդան ունենալ: — Կ'ուղենք 2781ը
բաժնել 752ով: Կը գրենք բաժանելին եւ անոր աջ
կողմը վերէն վար դիծ մը կ'իջեցնենք, յետոյ բաժանե-
լին դիմացը՝ գծին միւս կողմը՝ կը գրենք բաժանարարը
եւ տակէն դիծ մը, թաժանելի 2781 | 752 թաժանարար
այս գծին տակ ալ 2256 | 3 Բանորդ
պէտք է գրենք քա- մնացորդ 525

նորդը Յետոյ կ'առնենք բաժանարարի առաջին թիւը
7, եւ բաժանելին ալ առաջին թիւը 2. կը տեսնենք
որ 2ին մէջ 7ը չի բաժնուիր, այն ատեն կ'առնենք բա-

ժանելին երկու թիւը 27, որուն մէջ 7ը կը բաժնուի
եւ 3 անգամ կայ: Այս 3ը քանորդն է, կը գրենք զայն
եւ ուր 3ով կը բազմապատկենք 752ը եւ արտադրեա-
լը կը գրենք բաժանելին տակ, յետոյ կը հանենք.
525ը մնացորդն է:

16.—Ի՞նչպէս 2781ը 752ով կը բաժնուի:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 77.—78. Բաժնեցէք 47:3: 68:5:
87:6: 92:5: 137ը 14ով: 218ը 27ով: — 457ը 59ով: 2735ը 648ով:
7928ը 837ով: 9638ը 1237ով: 647ը 198ով: 4567ը 992ով: 57918ը
6384ով: 79654ը 27987ով: — 79. Կար կարող կին մը տմիւր 15
քառորդ մէճիտիէ կը խնայէ կարի մեքենայ մը գնելու համար.
մեքենան կ'արժէ 80 հատ քառորդ մէճիտիէ, կինը քանի՞ ամիւէն
պետի կրնայ մեքենան գնել: — 80. Նրկու պզտիկ տղաքներ 48
հատ կեռաս բաժնեցին իրենց մէջ, ամէն մէկուն քանի՞ հատ ին-
կաւ: — 81. Մէկ մէճիտիէով քանի՞ զոյգ գուլպայ կրնաք գնել,
եթէ մէկ զոյգը 3 զրշ: Ըլլայ ե քանի՞ զրշ ալ կ'աւելնայ: —
82. Պարտիզպան մը 63 տունկ տնկեց 7 կարգի վրայ, ամէն մէկ
կարգին վրայ քանի՞ տունկ տնկեց: — 83. Մարդ մը 6 հատ գառ-
նուկ գնեց 72 զրշին, հաւր քանի՞ գնեց: — 84. Մէճիտիէին
վրայ եթէ 10 փարայ գնէք, քանի՞ քառորդ մէճիտիէ կուտան ձե-
զի: — 85. Անգլիական ոսկի մը կ'արժէ 120 զրշ, ուրեմն մէկ Անգ-
լիականով քանի՞ մէճիտիէ կրնաք առնել: — 86. 8 մէթը կեր-
պար 48 զրշ կ'արժէ, մէկ մէթը քանի՞ կ'արժէ: — 87. Նրկու
տղաքներ մէկ երկոստանեակ գրչածայր իրենց մէջ բաժնեցին, ա-
մէն մէկուն քանի՞ հատ ինկաւ: — 88. 5 օխս կտաւատը 65 զրշ:
կ'արժէ, մէկ օխս քանի՞ կ'արժէ:

16. ԴԱՍ.—ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

17. Քանորդին առաջին բուանդանը կրնայ մեծ ըլլալ: —
Այո՛, կրնայ ըլլալ որ քանորդի առաջին թուանշանը մեծ
ըլլայ, այն ատեն գործողութիւնը սխալ չընելու համար
անկէ մէկ պոկոսեցնելու է: Օրինակ 2181ը կ'ուղենք

սխալ ֆանորդով

2181 752

2256 3

ուղիղ ֆանորդով

2181 752

1504 2

677 մեացորդ

752ով բաժնել: Նախ կը տեսնենք որ բաժանարարին 7ը բաժանելիի 21ին մէջ 3 անգամ կայ, ուստի 3ը քանորդ կը գրենք եւ կը բազմապատենք բաժանարարը որ կուտայ 2256, բայց այս թեւը բաժանելիէն մեծ է: Այն ատեն փոխանակ 3ի 2 կը գրենք քանորդը ու կը տեսնենք որ գործողութիւնը ճիշտ կ'ելլէ:

17. — Ի՞նչ ընելու է՝ երբ ֆանորդին առաջին թուանշանը մեծ է:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — 89. Մարդ մը քաղաքը բերաւ ծախեց 18 զոյգ վառեակ 108 զրէի, մէկ զոյգը քանի՞նք է մէկ հատը քանի՞նք ծախեց: — 90. Կողով մը խնձորը կ'արժէ 15 զրէ, քանի՞նք կ'արժէ 12 կողովը: — 91. 8 կողով տանձը կ'արժէ 64 զրէ, մէկ կողովը քանի՞նք կ'արժէ: — 92. Նոգեկառք մը ժամը 45 հազարաւ մէթը ճամբայ կը կտրէ, Ա. քաղաքէն Բ. քաղաքը քանի՞ ժամէն կը հասնի եթէ այս երկու քաղաքները 315 հազարամէթը իրարմէ հեռու ըլլան: — 93. Մագործ մը 42 մէճիտիէ տուաւ գնեց շատ մը ոչխարներ՝ հատը 6 մէճիտիէի, քանի՞ ոչխար գնեց: — 94. Գործաւոր մը 35 օրուան համար 210 զրէ ստացաւ, օրը քանի՞նք զրէ էր իր վարձը: — 95. Ընտանիք մը 332 զրէ ծախք ըրաւ 2) օրուան մէջ մինակ հացի ու միսի համար, օրը ի՞նչ ծախք ըրաւ: — 96. Կոշկակար մը 36 զոյգ պզտիկ կոշիկ շինեց եւ 324 զրէ ծախք ըրաւ, մէկ զոյգը քանի՞նք զրէի եկաւ: — 97. Կոշկակարը սոյդ կուշիկները ծախեց հատը 12 զրէի, քանի՞նք զրէ վաստկեցաւ: — 98. 12 զոյգ գուլպայ գնեցի 60 զրէի, մէկ զոյգը քանի՞նք եկաւ: — 99. Գպրոցի մը մէջ 54 աշակերտ կայ եւ 9 դաստեղան, ամէն մէկ սեղանին առջեւ քանի՞նք հոգի կը նստին: — 100. Տղայ մը օրը 15 երես կը կարդայ զբքի մը մէջէն որ 75 երես ունի, քանի՞նք օրէն կ'աւարտէ զբքը: — 101. Գեղացի մը 8 սագ ծախեց 72 զրէի, հատը քանի՞նք եկաւ: — 102. Մարդ մը 175 զրէ պարտք ունի, կ'ուզէ շարաթը 25 զրէ վճարելով պարտքը միջնել, քանի՞նք օրէն կ'աւարտի այս պարտքը: 103. Գործաւոր մը 105 զրէ առաւ 15 օրէն, ի՞նչ

էր իր օրականը: — 104. Ընտանիք մը 2700 զրէ ծախք կ'ընէ մէկ տարուան մէջ, ի՞նչ կը ծախէ ամիսը: — 105. 75 մէթը կերպար 975 զրէի ծախուեցաւ, քանի՞նք եկաւ մէթը:

17. ԴԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

18. Բաժանարարն ու քանորդը կրնան մէկէ աւելի թուանշաններ ունենալ. — Ինչպէս որ բազմապատկութեան մէջ մասնական արտադրեալներ կային, նոյնպէս բաժանումի մէջ մասնական բաժանելիներ կան: Օրինակ, եթէ 4198ը բաժնենք 74ով, նախ 7ը կը բաժնենք 41ին մէջ, 5 անգամ. Մասնական բաժանելի $\widetilde{419.8} | 74$ բաժանարար $370 | 56$ ֆանորդ

Բ. Մասնական բաժանելի 498
 444

Մեացորդ 54

գամ կայ. 5ով կը բազմապատկենք 74ը եւ 370ը կը գրենք 419ի տակ. աւասիկ այս 419ը կը կոչուի Ա. մասնական բաժանելի, կը հանենք, կը մնայ 49, որուն առջեւ կ'առնենք վերի 8ը դոր կէտով մը բաժնած էինք Ա. մասնական բաժանելիէն, եւ կ'առնենք Բ. մասնական բաժանելին 498: Այն ատեն 7ը կը բաժնենք 49ի մէջ. թէեւ 7ը անգամ կայ, բայց 7 անգամ 74ը տուելի մեծ է 498էն՝ ուրեմն 6 անգամ կ'ըսենք. Այսպէս կ'ոչնենանք 56 քանորդ եւ 54 մնացորդ:

18. Ի՞նչպէս 4198ը 74ով կը բաժնուի: Հետեւեալ աղանձակները ի՞նչ կ'ըսուին:

106. Բաժնեցէք 573ը 48ով: 78ը 56ով: 456ը 33ով: 5978ը 72ով: 54978ը 67ով: 45678ը 754ով: 12345ը 17ով: 794673ը 632ով: 56874ը 78ով: 798654ը 638ով: — 107. Աղարակապան մը 45 ոչ-

խար ծախեց 1575 զրշի, մէկ ոչխարը քանի՞ եկաւ: — **108.** 999 օխա խահուէն քանի՞ պարկերու մէջ կրնանք լեցնել, եթէ ամէն մէկ պարկը 37 օխա պարունակէ: — **109.** Մարդ մը ամբողջ տուն մը շինելու համար գործածեց 12750 քար, այնպէս որ մէկ քարը 5 զրշի նստեցաւ իր վրայ, տունը քանի՞ շինուեցաւ: — **110.** Հաջադործ մը 18 պարկ այլեր գնեց 990 զրշի, մէկ պարկը քանի՞ զրշ: արժեց:

19. ԴԱՍ.—ԱՄՓՈՓՈՒՄ 2. ԱՄՍՈՒԱՆ (1—12)

Բաժանումին սահմանը.—Թիւ մը ուրիշ թիւով մը բաժանել, կը նշանակէ փնտռել թէ մէկը միւսին մէջ քանի՞ անգամ կայ:

Այն թիւը որ պէտք է բաժնուի, կը կոչուի բաժանելի: այն թիւը որ կը ցուցնէ թէ քանի՞ հաւասար մասերու բաժնուելու է, կը կոչուի բաժանարար. բաժանումէն առաջ եկածը կ'ըսուի քանի, որ կը ցուցնէ բաժանելին ամէն մէկ մասը:

Երբ բաժանարարը քանի մը անգամ հանենք բաժանելիէն եւ մնայ այնպիսի թիւ մը որ բաժանարարէն փոքր է, այդ թիւը կը կոչուի մնացորդ:

Քանորդը միշտ մէկ թիւ կ'ունենայ երբ բաժանարարը բաժանելին մէջ 9 անգամէն աւելի չկայ:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — **111.** Պէտք է 3500 զրշ բաժնել աղքատ ընտանիքներու, ամէն մէկին 25ական զրշ տալով, քանի՞ ընտանիքի մէջ բաժնելու է այդ գումարը: — **112.** Կոշկակար մը 6 զլլայ տղայի կոշիկ պատրաստեց 72 զրշ: Ժախը ընելով և ծախեց 96 զրշի, ամէն մէկ զլլաք քանի՞ զրշի նստեցաւ իրեն և քանի՞ զրշի ծախեց յետոյ և ի՞նչ շահեցաւ ամէն մէկուն վրայ:

20. ԴԱՍ.—ԱՄՓՈՓՈՒՄ 2. ԱՄՍՈՒԱՆ (13—18)

Բաժանումին այլեւայլ պարագաները. — Եթէ լրիւ տարն ու քանորդը մէյ մէկ թուանշան ունենան, այս քանորդը կրնանք գտնել բազմապատկութեան աղիւսակին միջոցաւ:

Երբ բաժանարարը մէկէ աւելի թուանշան ունի, այն ատեն բաժանելին ձախ կողմէն կը դառնայ մէկ կամ երկու թուանշան եւ բաժանարարի առաջին թուանշանը անոր մէջ կը բաժնենք. ելած քանորդը կա՛մ ճիշտ պիտի ըլլայ, կա՛մ աւելի մեծ: Երբ աւելի մեծ ըլլայ քանորդին այս առաջին թիւը, այն ատեն 1 կը պակսեցնենք անկէ:

Երբ բաժանելին ու բաժանարարը շատ մը թուանշաններ ունենան, այն ատեն բաժանելին ձախ կողմէն կէտով մը կը դառնայ այնքան թուանշան, որքան պէտք է՝ բաժանարար անոր մէջ բաժնելու համար: Այս առաջին մասը կ'ըսուի Ա. մասնական բաժանելի:

Բաժանարարը Ա. մասնական բաժանելին մէջ կը փնտռենք եւ կը գտնենք թիւ մը որ քանորդի առաջին թուանշանը կ'ըլլայ, ասով կը բազմապատկենք բաժանարարը եւ ելած արտադրեալը Ա. մասնական բաժանելին տակ կը գրենք, անկէ կը հանենք եւ կ'ունենանք Ա. մնացորդ մը: Այս մնացորդին քով կ'ըջեցնենք բաժանելի այն թիւը որ Ա. մասնական բաժանելիէն յետոյ կուգայ, այն ատեն կ'ունենանք Բ. մասնական բաժանելի մը եւ առաջինին պէս կը շարունակենք գործողութիւնը, կը գտնենք քանորդին երկրորդ թուանշանը եւ այսպէս շարունակ:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ. — **113.** Որմնագիր վարպետ մը իր ձեռքին տակ կը բանեցնէ 45 բանուր և մէկ շաբթուան համար ստնոց և վճարէ 1620 զրշ: Ի՞նչ է ամէն մէկ բանուրին օրողչէքը: — **114.** Եթէ 13 ոչխարին համար 673 զրշ վճարուի, մէկ ոչխարը քանի՞ զրշի կուգայ:

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1. ԴԱՍ. — ՕԴԸ ՎԱՌԵԼԻՔՆԵՐԸ ԿՍՅՐԻ

1. Վառելիքներ. — Աւաթիկ սա փայտի կտորները, սա ածուխը, աստնք վառելիքներ են: Վառելիք կ'ըսուի այն բաներուն որ կ'այրին:

2. Մարմին մը այրելու համար օդ պէտք է. — Վառա-



Պատ. 42

Վառարան

քաշէ, օդը ներս կը մտնէ եւ փայտի կտորները ամէն կողմէ կը շրջապատէ, կ'այրէ զանոնք եւ խողովակնե-

1. Ի՞նչ է վառելիք: — 2. Վառարանի մը մէջ ո՞ր բան մը կ'այրի, օդի հոսանք կայ: Այդ օդի հոսանքը կաշուի է:

2. ԴԱՍ. — ՕԴԻՆ ՄԵՋ ԱՅՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

3. Մարմին մը այրելի յետոյ ի՞նչ կը մնայ. — Երբ փայտի մը կտոր ամբողջովին այրի, մինակ մոխիր կը մնայ: Մոխիրը կ'այրի, որչափ կ'ուզես տաքցուր զայն: Մոխիրը փայտին մէջ պղտիկ մասն է, իսկ փայտին միւս մասը մոխի եղաւ եւ օդին մէջ բարձրացաւ: Մոխր օդի հոսանքին հետ դուրս կ'ելլէ, բայց խողովակին վրայ մնալ կը թողու: Այս մուրը մոխիրին պէս չէ, կրակի վրայ կ'այրի ան:

4. Վառելիք տաքութիւն եւ լոյս առաւ կը բերէ. —

1. Երբ փայտը կ'այրի վառարանին մէջ, մօտեցուցէք ձեռքերնիդ, ի՞նչ կը զգաք: Տաքութիւն կը զգաք, այնպէս չէ: Ուրեմն փայտը այրած ժամանակ կը ճախցնէ:

Եթէ սենեակը մութ է, վառուող փայտը թեթեւ լոյս մ'ալ կը տարածէ սենեակին մէջ եւ կը շառաւորէ զայն: Ուրեմն վառելիք մը թէ՛ կը տաքցնէ, թէ՛ կը լուսաւորէ: Բայց վառելիքներ կան որ ճախցնելու համար աղէկ են, կան որ ալ շառաւորելու աղէկ են:

2. Տաքցնելու համար ամէնէն շատ գործածուած վառելիքներն են փայտն ու ածուխը:

Լուսաւորելու համար շատ գործածուող վառելիքներն են մօմը, ձէթը, քարիւղը որոնք լաւ պաներու մէջ կը վառուին:

Վերջապէս շառաւորութեան կազմ կայ, զոր հանքա-ծուխէն կը հանեն՝ հանքածուխը դոյր ամաններու մէջ այրելով: Այս կազմ թէ՛ կը լուսաւորէ թէ՛ կը տաքցնէ:

3. Մարմին մը այրելէ ետք ի՞նչ կը մնայ: Վառարանի խողովակէն դուրս ելածը ի՞նչ է: Իսկ խողովակին վրայ մնացածը: Ծխանցերուն մէջ հողեղի ի՞նչպէս կը պատահի: — 4. 1. Վառելիքներուն երկու պատճառները որո՞՞նք են: 2. Տաքցնելու եւ լուսաւորելու ծառայող վառելիքներ ըսէ: Ի՞նչ է լուսաւորութեան կազմ:

3. ԴԱՍ. — ԶՈՒՐԸ

5. ԳՈՅ. — Զուրը քափանցիկ է. — Դիտենք սա գաւաթին մէջի ջուրը. անգոյն է եւ բոլորովին թափանցիկ, Բայց եթէ լճակի մը կամ ծովու մը ջուրերը դիտենք, կը տեսնենք որ կապոյտ գոյն ունին կամ երկնագոյն են: Բայց գիտնալու է որ ջուրը թափանցիկ կ'երեւի գաւաթի մը կամ շիշի մը մէջ երբ անոր թանձրութիւնը քիչ է, իսկ երբ գետին կամ ծովին մէջ ջուրը շատ խորունկ է, բան մ'ալ չ'երեւիր անոր յատակը: Ուրեմն մեծ քանակութեամբ մաքուր ջուրը կապոյտ է եւ շատ թափանցիկ չէ:

Ե. Ծովու զուրն աղի է, անճրէի զուրը՝ ո՛չ. — 1. Սովորաբար մենք աղբիւրներու եւ գետերու ջուրը կը խմենք: Այս ջուրը մաշնաւոր համ ու հոտ չունի, այսպէս է անճրէի ջուրն ալ: Այս ջուրին կ'ըսուի անուշ ջուր կամ խմեղու ջուր: Իսկ եթէ կաթիլ մը ծովու ջուր անենք բերաննիս, լիզի համ կուտայ:

2. Եթէ քիչ մը ծովու ջուր դնենք պնակի մը մէջ, քիչ ատենէն անճրէի ջուրի պէս կը ցնդի: Բայց անճրէի ջուրը երբ շոգիանայ, ցնդի, բան մը չի մնար պնակին յատակը, իսկ ծովու ջուրը ցնդելէ յետոյ, պնակին տակ փայլուն կտորներ կը մնան: Այս փայլուն կտորներէն հատ մը բերաննիդ դրէ՛ք, աղի համ կ'առնէք. այո՛, անոնք աղ են: Ուրեմն ծովու ջուրին մէջ աղ կայ, ծովու ջուրը աղի ջուր է:

5. Մաճուր ջուրը ի՞նչ գոյն ունի երբ ցաւ հաճախութեամբ կը գտնուի սեղ մը: Խորունկ ջուրը քափանցիկ է: — 6. 1. Անուշ եւ աղի ջուրերուն մէջ ի՞նչ տարբերութիւն կայ: 2. Երբ պնակի մը մէջ ծովի ջուրը շոգիանայ, ի՞նչ կը մնայ պնակին մէջ:

4. ԴԱՍ. — ԱԾՈՒԽԸ

7. Հանքածուխը. — Մինակ փայտ ու փայտի ածուխ է որ կը վառեն տաքոյնելու համար: Շատ տեղեր հանքածուխ կը գործածեն: Հանքածուխը սեւ քարի կը նմանի, հողին տակէն, շատ խորունկէն կը հանեն զայն:



Պատկ. 43

Հանքածուխի հանք մը

Այս հանքածուխը, կ'ըսուին հանքածուխի հանք:

Այս հանքերու մէջ շատ զժուար է աշխատութիւնը եւ շատ վտանգաւոր (Պատկ. 43):

Ե. Փայտածուխը. — Բայց տուններու մէջ սովորաբար փայտածուխ կը գործածուի: Այս ածուխը անտառներու մէջ կը պատրաստեն ծառերու փայտէն: Ասոր համար ծառի հաստ ճիւղերը հրկար հրկար կը կտրեն եւ զանաք կոնի ձեւով իրարու վրայ կը շարեն, յետոյ հողով կը ծածկեն եւ մէջը կրակ դնելով կը սկսին այրել: Փայտերը հողին տակ կէս մը կ'այրին, կը սեւնան, ածուխ կը դառնան:

7. Ի՞նչ է հանքածուխը: Ուսկի՞ց կը հանեն զայն: — 8. Ի՞նչ է փայտածուխը:

5. ԴԱՍ.—ԵՐԿԱԹ.—ԹԱՓԾՈՒ ԵՐԿԱԹ.—ՊՈՂՊԱՏ

9. Երկաթն ի՞նչ բանի կը ծառայէ. — Դամերը, արօրին խօփը, մուրճերը, կացինները եւ ուրիշ շատ մը առարկէ երկաթէ չինուած են, անոր համար որ երկաթը շատ դիմացկուն է եւ չուտով չի մաշիր: Կը տեսնէք կառքերու անիւները, որ մինչեւ վերջը քարերուն կը քսուին. եթէ երկաթով չըջապատուած չըլլային, չուտով կը մաշէին, կ'ոչնչանային: Զիւրու ոտքերն ալ, որ պէս զի չ'աշին, պայտագործը երկաթէ պայտեր կը դաւէ անոնց տակ:

10. Թափձու երկաթն ի՞նչ բանի կը ծառայէ: — Զուլածոյ երկաթն ալ անտակ մը երկաթ է որուն մէջ ածուխ խառնած են եւ որ աւելի դիւրաւ կը հալի, քան սովորական երկաթը. Այս երկաթը աւելի դիւրաւ կը կտորի: Շատ մը կարեւոր առարկաներ կան որ թափձու երկաթէն չինուած են, ինչպէս երկաթէ սաներ, արդուկներ (խրիւ) եւնա ինչո՞ւ համար այս առարկաները սովորական երկաթէ չինուած չեն: Որովհետեւ թափձու երկաթը աւելի աժան է:


11. Պողպատն ի՞նչ բանի կը գործածուի: — Ի՞նչ բանէ չինուած է դանակի բերանը: Հասարակ երկաթէ չինուած չէ ան, որովհետեւ հասարակ երկաթը չուտով կը մաշի, պողպատն չինուած է ան:

Այն բոլոր գործիքները որ պէտք է շատ դիմանան, չինուած են պողպատէ, ինչպէս մկրատ, դանակ, ասեղ, սղոց, եւլն:

9. Երկաթէ առարկաներ քսէ: — Ինչո՞ւ ասոնք երկաթէ կը շինուին: 10.—Ի՞նչ է քափձու երկաթ քսուածը: Ի՞նչ բանի կը ծառայէ: 11.—Գանակի մը շեղքը ինչէ՞ կը շինուի: Պողպատէ առարկաներ քսէ: Ինչո՞ւ պողպատէ կը շինուին ասոնք:


6. ԴԱՍ. — ԶԻՆԿԱՅ, ԿԼԱՅԵԿ, ԿԱՊԱՐ, ՊՂԻՆՁ

12. Զինկայ, կլայեկ, կապար. — Զինկոն աւելի կակուղ երկաթէն: Զուրը կ'աւրէ, կը ժանգոտե երկաթը, բայց զինկային փափ մը չի տար: Զինկայով կը չինեն ցնդողներ (Պատկ. 45), գոլեր, ջրմուղներ, եւայլն: Կլայեկը զինկայի կը նմանի, անոր պէս կակուղ է: Կապարով կը չինեն դգալներ, պատառքողներ, հեղուկաշափեր (Պատկ. 46) եւայլն:



Պատկ. 45

Զրի ցնցուղ



Պատկ. 46

Կլայեկէ նեղուկաշափ

Կապարը կը նմանի զինկային ու կլայեկին, բայց աւելի ծանր է այդ մետաղներէն: Կապարով կը չինեն Զուրի խողովակներ, գնտակներ, եւայլն:

31. Պղինձ, արծյր, անագապղինձ. — Պղինձը (պագըր) կարմիր մետաղ մըն է, որ հինալով եւ թրջուելով թոյն մը առաջ կը բերէ: Պղինձէ կը չինեն կերակուր եփելու սաներ եւ պղինձէ պնակներ, որոնց ներքի երեսը կլայեկով կը ծածկեն:

Արծյրը (փիրիմ) որուն զեղին պղինձ ալ կ'ըսեն, սովորական պղինձէն աւելի դիւրաւ կը ծեծուի եւ կը չինուի: Արծյր կը չինուի եթէ պղինձը եւ զինկոն իրա-


բու խառնելով մէկտեղ հալեցնենք: Արդիւ է կը պատ-
րաստեն մոմալաներ, դռներու կոճակներ, կշիռներ
նժարներ:

Անագ-սպիւնձը (քուճ) շատ հնչուն ձայն ունի, դի-
րաւ կը հալի: Պղինձն ու կալեկը մէկտեղ հալեցնելու
կը պատրաստուի անագապղինձ որով կը շինեն զան-
գակներ, թնթանօթներ:

12. Ի՞նչ է զինկոյ լսուած մեաղը: Իսկ կլայկը: Եւապո-
Ղինկով, կլայեկով, կապառով շինուած ճիւղեր լսէ: — 13. Ի՞նչ
պղինձը, առոյթը, անագապղինձը: Աս մեաղներով շինուած առա-
վանքեր լսէ:

7. ԴԱՍ. — ԱՊԱԿԻ

14. Ապակին ի՞նչ բանի կը ծառայէ: — Տուններու պա-
տուհաններուն ապակի կ'անցընեն. ապակիին մէջէն կա-



Պատկ. 47

Գործաւորները փչելով, ապակիէ շիւթ
կը պատրաստեն
պակին մարդիկ կը շինեն: Հողին տակ
այս ձեւով ապակի

րելի է տեսնել
զուրաւ լաւ մ
կ'երեւի, բայ-
տապակին լոյս
կ'անցնի, հով
է'անցնիր: Այ-
պատուհանի ա-
պակիները շատ
կարծր են եւ շատ
թափանցիկ, բայ-
ցիւրաւ կը կոտ-
րուին:

15. Ապակե-
րիճուքիւն. — Ա.

շի գանուիր: Ապակին շինելը շատ աշխատութիւն կ'ուզէ
եւ շատ դժուար է: Հասարակ ապակին, օրինակ՝ սա շի-
շին ապակին կը շինուի երբ իրարու հետ խառնեն եւ
հալեցնեն առաջ, մօխիւր եւ տեսակ մը մաքուր հող,
որմէ յախճապակի ամաններ կը շինեն:

Եթէ ապակիի գործարանի մը մէջ մտնէք, կը տես-
նէք որ սոսկալի տաք է: Գործաւորները հագած են եր-
կար ձերմակ շապիկ մը, ձեռքերն են երկաթէ խոշոր խո-
ղովակներ, որոնց ծայրով մաս մը հալած ապակի կ'առ-
նեն (Պատկ. 47):

Այնքան ճարպիկութեամբ կը գործեն օգին մէջ եր-
կաթէ խողովակը եւ մէջէն ուժով մը կը փչեն, որ մէկ
վայրկեանի մէջ շիւ մը կը պատրաստեն եւ կը նետեն
մէկ կողմ:

14. Ապակիէ առարկանքեր լսէ: — 15. Հողին մէջ պատրաստ կը
կը գտնուի՝ ապակին: Ինչո՞ւ կը շինուի: Շիւթը ի՞նչ կերպով կը շինեն:

8. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Զ. ԱՄՍՈՒԱՆ (1—15)

Վառելիք. — (1—2) Վառելիք կ'ըսուի այն մարմին-
ներուն որ կ'այրին: Մարմին մը տրեւել համար ան-
պատճառ օդ հարկաւոր է: Երբ մարմին մը օդին մէջ
կ'այրի, կը թողու մօխիւր եւ զուրս կուտայ մուխ:

Տաքցնել եւ լուսաւորել. — (3—4) Վառելիք մը թէ՛ կը
տաքցնէ, թէ՛ կը լուսաւորէ: Սովորաբար տուն մը, սեն-
եակ մը տաքցնելու համար փայտ եւ ածուխ կը գոր-
ծածուի, իսկ լուսաւորելու համար, մոմ, ձէթ, քարիւղ:
Լուսաւորութեան կազմ թէ՛ լուսաւորելու թէ՛ տաքցնե-
լու կը գործածուի:

Նոր Դպրոց, Զ. պրակ

Ջուրը. — (5—6) **Ջուրը,** երբ քիչ է, գոյն չունի ե թափանցիկ է, — երբ շատ է, կապույտ գոյն ունի ե յատակը չ'երեւիր: Ծովու ջուրը աղ կը պարունակէ, աղի է Աղբիւրներու, գետերու, անձրեւի ջուրը անուշ ջուր է:

Ածուխը. — (7—8) Հանքածուխը կը գտնուի հողի տակ. շատ դժուարութեամբ զայն դուրս կը հանեն հանքածուխի հանքերէն: Իսկ փայտածուխը կ'իսովին այրաւ փայտերէն առաջ եկած է:

Երկաթ, քափծու երկաթ, պողպատ. — (9—11) Այն առարկաները որ շատ կը գործածուին եւ շատ պէտք դիմանան, երկաթէ շինուած են: Այն բաները որ շատ դիմանալու պէտք չ'ունին, քափծու երկաթէ շինուած են: Բայց աւելի կարծր ու սուր գործիքները պողպատէ կը շինեն:

Ջիճկոյ, կլայէ, կապար. — (12) **Ջինկոն** երկաթէն աւելի կակուղ է, բայց անոր պէս չի ժանգոտիր:

Պզիճճ, արայր, ամազապզիճճ. — (13) Պզինձը կարմիր մետաղ մըն է եւ իր մէջ լեցուած կերակուրները կը թուլանորէ: Արայրը պզինձէ եւ զինկոյէ շինուած է: Անազապզինձը շինուած է պզինձէ եւ կլայեկէ (անագ):

Ապակի. — (14—15) Ապակին կարծր ու թափանցիկ է: Յախճապակիի հողը, աւաղը եւ մոխիրը մէկտեղ հալելէն ետք կը շինեն ապակին:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

1. ԴԱՍ. — ԲԱՅԸ ԺԽՏԱԿԱՆ ՁԵՒՈՎ

1. Բայը ժխտական ընելու համար անոր սկիզբը կը բռնէք չ կամ մի մակրտոններ:

2. Սահմանական ներկան ու անկատարը ժխտական ընելու համար, աներեւոյթին չ գիրը յի կը փոխենք եւ ական բային ժխտական ներկան ու անկատարը կը բռնէք, այսպէս.

Ներկայ — Ձեւ գրեք, չեւ գրեք, չի գրեք, չեւի գրեք, չեւի գրեք, չեւի գրեք:

Անկատար — Ձեի գրեք, չեիր գրեք, չեք գրեք, չեիք գրեք, չեիք գրեք, չեիք գրեք:

3. Հրամայական եղանակը ժխտական ընելու համար փոխէք մի կը դուրս. Մի՛ սիրեք, մի՛ խօսիր, մի՛ կարդար: Մի՛ սիրեք, մի՛ խօսիք, մի՛ կարդաք:

4. Միւս բոլոր եղանակներն ու ժամանակները չով ժխտական կ'ըլլան:

ԾԱՆ. — Ձայնաւորով սկսող բայերուն Սահմ. եզ. Գ. դեմքը կ'ըլլայ (ի գիրը ջնջուելով): Օրինակ. Չ'ապրիր, չ'աղար:

1. — Ժխտական (բացասական կամ արգելական) նշանով խոնարհեցէք սա խօսքերը.

Ես ջուր չեւ խմեք: Ես հաց չեւ ուտեք:

2. — Սա ժխտական խօսքերը հաստատական կամ ստորասական քրէք.

Ծովը չի փոփրիր: — Աբէլ իր մայրը շատ չի սիրեր:

— Ո՞վ չի տեսներ զիս: — Ծանր չեւ ուտեր: — Մի՛ խա-

ղաք չարունակ: — Ծուռ մի՛ ընեք: — Բժիշկը վաղը

չպիտի գայ: — Մեռելը չթաղեցին: — Ասկէ ետքը քեզ

Հպիտի սիրեմ: — Մինչեւ որ ընկերներս գայ, չուտեմ: — Գեղի պիտի հապառնեմ: — Այսօր քեզի կօշիկ չեմ առած: — Ինչո՞ւ չես կարգար:

1. Բայր ժխական ընելու համար ի՞նչ գրեք կը գործածեմ: — Եղմով տ'ըողջացան: — Ես անկէ հետեւ կը գտնուիմ: Սահմ. ներկան ու անկասարք ի՞նչպէս ժխական կ'ըլլան: — 3. Ի՞նչ երանայական: — 4. Միւս եղանակներ:

2. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

3. Ի՞նչ դէպքէ եմ սա դերանունները. Դուն, ինձ, մենք, ես, ան կամ անիկա, դուք, իրենք անոնք:

Ասոնց քով մէկ բայ դրեք:

Նոյն խօսքերն աւելի ընդլայնեցեք:

Նոյն » ժխականները:

Օրինակ. — Դուն խմելիք օշարակը:

Դուն չխմելիք օշարակը:

4. Սա բ. ուերուն սահմանը տուեք. (Տե՛ս Գ. վարձ. Մանկանց, Ե. տիպ, էջ 5, Հրահանգ 2.)

Օրինակ. — Կղզի կը կոչուի ցամաք մը որուն շուրջ ջուրով պատած է:

1. Կղզի: 2. Ապերախտ: 3. Աղբիւր կամ աղն: 4. Բաղնիք: 5. Հորիզոն: 6. Պերճախօս: 7. Լպուտ: 8. Սկի:

3. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

5. — Գտեք. Տեք բայիները: Յետոյ ըսեք քե դերանուն տեքայիներէն զատ, բայերուն քով դրուած բառերն ի՞նչ տեսակ բառ, են եւ ի՞նչ պաշտօն ունին.

Ես քեզի կը խօսիմ: — Դուն ինծի կը գրեմ: — Դուք մեզի կը պատասխանեք: — Անոնք զիրար կը բզբտեն:

Ինծի կը հնազանդի: — Ես անոր կը սորվեցնեմ: — Ես ձեզի կը ղրկեմ: — Մենք ձեզմէ դո՛ւ ենք: — Դուք անով կը պարծիք: — Անոնք

Եղմով տ'ըողջացան: — Ես անկէ հետեւ կը գտնուիմ: Դուն ինձմէ բան մը կ'ուզե՞ս: — Ես քեզ կը փնտռեմ: Նոյն խօսքերը ժխականները:

» » Նորէն գրեցեք հարցական մեով:

6. — Սա բայերը անցողական ըրե՛ք, ցնե՛ղ վերջանորոշեմք:

Խնդալ, հազալ, սիրել, խօսիլ, թողել, հագնիլ, սորվիլ, մոռնալ, գիտնալ, գողնալ, կաթիլ, զորդել, պատիլ, լինալ, մոռնալ, վաղել, երերալ, քնանալ, սոսկալ, լալ, սպլիլ, պաղնել, թքնել, վերնալ, անցնիլ, գոյանալ, խաշալ, սնանիլ, շէննալ:

7. — Գտեք տասը բայ որոնք ո՛չ քե ցնե՛ղ մասնիկով, այլ տալ բայով անցողական ըլլան:

8. — Գտեք երեքական հատ

Քաղաքի անուն, գիւղի անուն, գետի անուն, լիճի անուն, լեռի անուն, դաշտի անուն:

4. ԴԱՍ. — ՀԻՆԴ ՏԵՍԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

5. Խօսք մը հինգ ձեւով կը զրուցուի.

Հաստատական. — Աս տղան շատ ժիր կ'երեւայ:

Հարցական. — » » » ժիր կ'երեւայ:

Ժխական. — » » » ժիր չ'երեւար:

Հրամայական. — Տղա՛յ, շատ ժիր երեւցիր:

Զարմացական. — Աս տղան ո՛րչափ ժիր կ'երեւայ:

9. — Սա նախադասութիւնները ի՞նչ ձեւ են (հաստատական, հարցական, ելն.):

Ինչո՞ւ հաց չես ուտեր: — Ա՛խ, ի՛նչ աղէկ տղայ ես:

— Մենք ձայնագրութիւն չենք գիտեր: — Քանի մը օր
երուսաղէմ պիտի երթանք: — Դուք ալ կուգա՞ք:
— Մոյլ ծոյլ մի՛ նստիր, աշխատէ: — Անկիրթ խօսք
մի՛ ընեն: — Ես անանկ բան ըսի՞: — Թռչունները ան
կ'երգեն: — Բարեկամներս ո՛րքան անձնուէր են,
գիտեր: — Աս տղաքը, կարծեմ, լաւ կ'աշխատին:
Նայի՛նք, խելօք ալ կը կենա՞ն:

10. — Պատասխանեցէք գրով ու բերնով:

1. Բազմավանկ գոյականները ի՞նչպէս յօքնակի կ'ը
լան: (Օրինակներ գտէք):

2. Ի՞նչ ըսել է դերանուն, դերասան, դերակատար:

3. Ի՞նչ ըսել է քեր ելլել, ընթեր, առնթեր, առն
թերակից, թերուգէմ:

4. Ի՞նչ ըսել է քերի, անթերի, թերակիրթ, թերա
կատար:

5. Ի՞նչ ըսել է դեռ:

6. Ուրեմն ըսէք թէ ի՞նչ տարբերութիւն կայ դեռ
դեռ, քեր, քերի բառերուն մէջ:

ԾԱՆ. — Կայ նաեւ քեռ որ կը նշանակէ մանուած բուրգ որո
գուլպայ կը հիւսեն:

11. — Կետերուն տեղ պետք եղած բառերը դրէք (9
Վարժ. էջ 13):

1. Ես կը բնակիմ . . . գիւղը որ . . . գաւառի մէ
ջ է: 2. Մնողքիս անունն է . . . մականունը՝ . . . ի
անունս է . . . : 3. Կնքահայրս է . . . , իսկ տանե
րէցնիս . . . : 4. Ես ծնած եմ . . . թուականին
եւ հիմա . . . տարեկան եմ: 5. Գպրոցը կ'երթա
եւ Դասերը կ'առնեմ: 6. (ստորագրուի
եւ թուական):

5. ԴԱՍ. — ՀՐԱՆԱԳԻՆԵՐ

12. — Սա բառերուն ստիմանք տուէք. (տես Գ. Վարժ.
Մանկանց, Ե. տիպ, էջ 7, Հրահանգ 4.):

Օրինակ. — Անդրանիկ կամ առջինեկ կը կոչուի մար-
դու մը առաջին դաւակը:

1. Անդրանիկ կամ առջինեկ: 2. Կրտսեր: 3. Գինի:
4. Ժամացոյց: 5. Հողմաղաց: 6. Զաղացք: 7. Աշխար-
հացոյց քարտէս: 8. Բոյն: 9. Մրդավաճառ: 10. Օձիք:
11. Զրհան:

13. — Վարի օրինակին պէս մէյ մեկ խօսքի մէջ գոր-
ծածեցէք սա բառերը.

— Աչքս, կողերս, թեւս:

— Իիթդ, բերանդ, ակռանդդ:

— Տունը, այգին, դաշտը:

ՕՐԻՆԱԿ

[Սիրս կը ցաւ: — Սիրս կը ցաւցընես կոր: —
— Սրտվս կը սիրեմ քեզ: — Սրէս արլւն կը հոսի: —
Սրսիս դիր ձեռքդ եւ տե՛ս ի՛նչպէս կը բաբախէ: — Սըր-
սիս հատորը դուն ես:]

14. — Սա անուններուն եզակի ուղղական հոլովը
գրեցէք.

Ճամբով, գլխէ, Իտալիոյ, գիշերունէ, Աննայի, եկե-
ղեցոյ, գինի, հոգի, կաղնի, կզղի, թերակզղի, պար-
տախտով, հերունէ, սիրոյ, լուսոյ, Աստուծմէ, տալով,
Քրոջմէ, տիրոջմով, հօր, մօրմէ, կղզորմով, ծծմօր, շան,
տան, աշնան, աղջկան, թիու, մէկու, արեւու, արջու,
ձմրան, ձմեռունէ, բարկութեամբ, մահու, Չինու, նե-
ղութենէ, երգման, խոստման:

15. — Հոլովը նոյն պահելով՝ նոյն բառերուն յօքնակի-
ներն ալ գրեցէք:

ԴԱՍ. 6. — ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Թ. Բայը վերլուծելու համար, պետք է ըսել թիվն ի՞նչ տեսակ է, ի՞նչ եղանակ է, ի՞նչ ժամանակ է, ի՞նչ թիվ է եւ ի՞նչ դէմք է:

Օրինակ. — Ես կրակը վառեցի լուցկիով:

Վառեցի՝ բայ ներգործական, սահմանական եղանակ կատարելով ժամանակ, եղակի թիվ, Ա. դէմք:

16. — Վերլուծեցիք 53 էջի 9րդ հրահանգին բայերը:

17. — Հետեւեալ բառերը անձ կը նշանակեն:

1. Ուրիւն մասնիկը կցելով՝ շինեցէք վերացական անուններ:

2. Ըսէք թե ի՞նչ իմաստ ունին այլ բառերը:

Ողբերգու, քասրերգու, եղերերգու, գուսաներգու, կասակերգու, հովուերգու, դիւցազներգու:

18. — Սա բառերուն բով դրէք՝ ըստ պատշաճին՝ վարք գրուած ածականները:

Զրոյց, վեպ, մանրավեպ, հեփնաք, պատմութիւն, անկողնութիւն, առասպել:

[Ածականներն են. — Անհիւն, մտացածին, հասէշի, սրբազան, ժողովրդական, անհաւատալի, գուարճալի]:

19. — Ըսէք, ի՞նչ կ'ընեն:

1. Ուրախ մարդիկը. — 2. Տրտում մարդիկը.

3. Գինով մարդիկը. — 4. Լուրջ մարդիկը.

5. Աղքատ մարդիկը. — 6. Հարուստ մարդիկը.

7. Քոտոտ մարդիկը. — 8. Կաղ մարդիկը.

9. Դանդաղ մարդիկը. — 10. Ճարպիկ մարդիկը.

11. Բարի մարդիկը. — 12. Չար մարդիկը.

13. Մոկոտ մարդիկը. — 14. Տոկուն մարդիկը.

15. Կրօնասէր մարդիկը. — 16. Անմիտ մարդիկը.

6. Բայը վերլուծելու համար ի՞նչ հարցումներ ընելու է:

7. ԴԱՍ. — ԱՄԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՏԵՍԱԿԸ

7. Հինգ տեսակ ածական. — Ածականները հինգ տեսակ են, (Տե՛ս Ե. պրակ, էջ 74, դաս 10):

1. Որակական ածական, որ գոյականին որակաւթիւնը կը ցուցնէ. — ձերմակ վարդ, սեւ աչքեր, եւայլն:

2. Յուցական ածական, որ իբր թէ մատով կը ցուցնէ առարկան.

Այս, աս, աս այր, աս, աս, այն, ան, նա

ԾԱՆ. — Յուցական ածականները գոյականէն առաջ կը դրուին: Այս տունը, այդ ծառը, նա լեռը:

3. Ստացական ածականը կը ցուցնէ թէ բան մը որո՞ւն է: Ի՞նչ եղբայրս, քու ծնողքդ, ի՞ր կամ անոր տետրակը. — Մեր եղբայրը, ձեր ծնողքը, ի՞րենց կամ անոնց տետրակը:

Թ. Ինչպէս կը տեսնուի, յուցական ածական ունեցող գոյականներուն ծայրը ն կամ ը յօդ կը դրուի:

Թ. Իսկ ստացական ածականէն վերջը եկող անուններուն ծայրը ս, դ, ն կամ ը կը դրուի:

20. — Սա գոյականներուն յարմար որակական ածականներ գտէք. (տե՛ս Տարրական Գերականութիւն, էջ 13, հրահանգ 28):

Բեռ, պարտեղ, բարձ, խոտ, լաթ, շապիկ, օդ, զմեքին, քանակ, փոս, մելան, տղայ, կատակ, կերակուր, վարք, թուշ, մազ, եղբայր, դաւաղան:

21. — Խօսքեր շինեցէք եւ ածական բայերուն ստորագելները գտտեցէք.

Տէր բայի. Մարդ, թոչուն, հով, կրակ, հաւ, աշակերտ:

Ածական բայ կը խօսի, կ'երգէ, կը փչէ, կը վառի, կը կոկոսայ, կ'ուսանի:

Օրինակ. Մարդը կը խօսի, — մարդը խօսող է:

7. Ածականները բանի՞ տեսակ են: Ի՞նչ կը ցուցնեն որակական ծականները, իսկ ցուցականները, սացականները: — 8. Ցուցական ածական ունեցող գոյականին ծայրը ի՞նչ յօդ կը դրուի: — 9. Ի՞նչ սացական ածական ունեցող գոյականը ինչ յօդ կ'առնէ:

8. ԴԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Ք Ո Ւ Ք

1. Դուն խելօք հաշուով վաճառական ես.
Հող, փող ու ապրանք, գիտեմ, շատ ունեւ(*)
Բայց թէ փողէ՞դ շահ չի կայ մարդկութեան,
Թըքեր ենք քո՛ւ ալ, փողի՞դ ալ վըրան:
2. Երկինքէն քանքար քեզի տրուած է,
Հեղինակ անունդ աշխարհ փռուած է.
Բայց թէ գրէ՞դ շահ չի կայ մարդկութեան,
Թըքեր ենք քո՛ւ ալ, գրի՞դ ալ վըրան:
3. Հեռատես մօքով դուն զարդարուեցար,
Մեծ հարուստներու սիրելին դարձար,
Բայց թէ մօքէ՞դ շահ չի կայ մարդկութեան,
Թըքեր ենք քո՛ւ ալ, մօքի՞դ ալ վըրան:
4. Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռներ
Շատ կը յօրինես թանկագին բաներ.
Բայց թէ ձեռքէ՞դ շահ չի կայ մարդկութեան,
Թըքեր ենք քո՛ւ ալ, ձեռքի՞դ ալ վըրան:
5. Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հոչակ ու հանձար.
Բայց թէ լեզուէ՞դ շահ չի կայ մարդկութեան,
Թըքեր ենք քո՛ւ ալ, լեզուի՞դ ալ վըրան:
6. Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովեստըդ լեցուած է մարդոց բերան.
Թէ ուսումէ՞դ շահ չի կայ մարդկութեան,
Թըքեր ենք քո՛ւ ալ, ուսմանդ ալ վըրան:

(*) Ունիս:

22. — Վերի հատուածը կարդացէք, դժուար բառերը սորվեցէք եւ ըսէք թէ ի՞նչ է ընդհանուր լմաստը:

23. — Գտէք բայերն ու տեղբայրները:

9. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

24. — Սա ցուցական ածականներուն քով մէյ մէկ գոյական դրէք:

Սա, տա, նա, աւ, աւ, ան, այս, այդ, այն:

25. — Սա գոյականներուն քով ցուցական ածականներ դրէք:

... մարդը,	... վարդը,	... լեռը,
... տղան,	... շունը,	... աղջիկը,
... գիշեր,	... ծովը,	... տարին:

26. — Սա ստացական ածականներուն քով մէյ մէկ գոյական դրէք:

... Գլխարկս,	... հովանոցդ,	... ձեռնոցը,
... արտը,	... մշակները,	... զգեստները:

27. — Սա գոյականներուն ծայրի մասնիկները ջնջելով՝ անոնց սկիզբը դրէք ստացական ածականներ:

Օրինակ. — Գրիչնիս = մեր գրիչը, եւ այլն:

Տուներնիդ, խօսքերնին, քոյրերնիս, մատնիդ, հացդ, գինին, գիրքերս, հողերնիդ, սիրտերնին, պատառնիս, հովանոցնիս, գրամփնիս, աշխատութիւննին, գործերնիդ, պալուսակո՞ւնին:

28. — Հոլովեցէք սա գոյականները:

1. Այս մկրտաբ, տա բանալին, ան օրը:

2. Իմ բեռս, քու նաւակդ, անոր մայրը:

29. — Հարցումներուն պատասխանեցէք (Սին. Կասար.).

1. Ի՞նչ ըրինք երբ մեզի հաց տուին:

2. Ի՞նչ ըրին որ այդքան բարկացար:

3. Ինչ ըրաւ որ իրեն սրգոզեցար,
 4. Ինչ ըրի եւ քեզի որ կը վռնանայ
 5. Ինչ ըրիք երբ մենք դաս կը սորվէինք,
 6. Ինչ ըրիք երբ քունդ եկաւ:
 30.— Սա ստորագիլիկներուն քով մէկ մեկ գոյական դնելով՝ ըսէք քե ինչպէս ե սնտուկը, կտաւը, գրիչը, եւայլն: Օրինակ.— Մնտուկը պարսպ է, կտաւը քանձոր է, եւլն: Մնտուկը, կտաւը, գրիչը, պնակը, ուսփը, օշինդը, խնձորը, քացախը, լիմոնը, կոտեմը, թութակը, ծառան, վարդը (Ա. Պրակ, էջ 95, Հրահանգ 40):

10. ԴԱՍ — ՅՈՒՅԱԿԱՆ ԵՒ ՍՏԱՅԱԿԱՆ ՅՕԴԵՐ

10. Ցուցական յօդեր. — Շատ անգամ գոյականին ծայրը Ս, Դ եւ Ն գրերը կը դնենք՝ այս, այդ, այն ցուցական ածականներուն տեղը: Ասով աւելի որոշ ցոյց կուտանք առարկաները:

Օրինակ. — Բաղաքիս բնակիչները, (որ բոկ է այս քաղաքին բնակիչները): Գիւղիդ վարժարանը, (այսինքն այդ գիւղին վարժարանը):

11. Ստացական յօդեր. — Ստացական ածականին տեղը կը բռնեն ս, դ, և գրերը՝ գոյականին ծայրը դրուելով:

Օրինակ. — Մատս, գրիչդ, հագուստը. (փոխանակ ըսելու իմ մատս, իմ գրիչդ, իմ հագուստը):

12. Այս ձեւը յօդակիլի մէջ կ'առնէ

Միավանկ բառերու համար երկիս, երկիդ, երկին, Բազմավանկ » » միայն երկս, երկդ, երկն:

Օրինակ. — Զրեւրիս, արեւերկիդ, ծառերկին:

Փողոցերիս, պարտեզերիդ, մարմնակին:

13. Նոյն յօդերը կը դրուին նաեւ հոլովուած բառերուն ծայրը

Օրինակ. — Գիւղերնոս հունձքերը, մեծերնոս խոսքերը (որ բոկ է մեր գիւղին հունձքերը, մեր մեծերուն խոսքերը):

31.— Որոշեցէք ցուցական եւ ստացական յօդերը.

Աշխարհիս կրօնքները, եկեղեցիիդ հասոյթները, դպրոցիս տնօրէնը, մարդուս հարստութիւնը, պատրիարքարանիս շէնքը, կղզիիդ ժողովուրդը, թաղիդ աղքատները, հողերնոս բերքը, կղզիիս շուրջը, Ուսումնական խորհուրդս, ժողովիդ ատենադպիրը, վարչութեանս որոշումը, թեմիդ առաջնորդը, թաղիդ աղքատ ժողովուրդը:

32.— Օրինակիկն պէս խոնարհեցէք ամբողջ բայը.

Օրինակ. — Սահմ. ներկայ. — Ինչո՞ւ կը վստահիմ, Ինչո՞ւ կը վստահիս, ինչո՞ւ կը վստահի, ինչեքո՞ւ կը վստահինք, եւայլն:

10. Որո՞ք եմ ցուցական յօդեր եւ ո՞ր բառերուն տեղը կը գրածանք: — 11. Ս, Դ, Ն գրերը ո՞ր ածականին տեղը կը բռնեն: —

12. Միավանկ բառերուն յոյսակին ո՞ր ստացական մասնիկը կ'առնէ, իսկ բազմավանկներուն: — 13. Նոյն յօդերը միայն ուղղական հոլովին վրայ կը դրուին:

11. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

33.— Սա բառերուն սահմանը տուէք (Գ. Վարժ. էջ 21, Հրահանգ 18):

1. Ղեկ: 2. Մուրճ: 3. Սանդ եւ սխտորկուծ: 4. Գրաշարան: 5. Ուղտ: 6. Ծով: 7. Հրաբուխ: 8. Անձրեւ: 9. Ծիածան: 10. Որթ: 11. Դաւիթ: 12. Պահանջատէր: 13. Մեղաբան: 14. Աղօթատեղի, եկեղեցի, ժողովարան, տաճար, մզկիթ, եւայլն:

34.— Սա ներգործական բայերը կրասորականի փոխեցէք.

Տաշել, խաշել, քաշել, տեսնել, բերել, բռնել, հերկել, փետտել, սօթտել, կտրել, տապկել, սպաննել, զարնել, առնել, խառնել, կարգալ, երթալ, նայիլ, քրքրել, կապել, կապտել, նորոգել, զրուցել:

35.—Հոլսվը նոյն պահելով՝ եզակի ըրէք սա անունները.

Մարդոցմէ, ճամբաներու, խճուղիներու, գլուխներէ, տղոցմով, թեւերու, պատիմներու, գիշերներով, առտուններու, կլիմաներու, բարիներու, եկեղեցիներու, սէրերով, կաթնեղբայրներու, քոյրերով, վանահայրերու, երգումներու, աշխատութիւններով, մանկութիւններու, շուններու, մանուկներէ, աշուններ, թիւերու, էշերով, պապերու, երգումներով:

12. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

36.—Սա բառերուն սանմանը տուր (Գ. Վարժ. էջ 18, հրահանգ 15).

1. Վիզ: 2. Խորան: 3. Գերեզման: 4. Պանդուկ: 5. Որբ: 6. Այրի: 7. Ճաշարան: 8. Շուկայ: 9. Պանդուխտ: 10. Սան, տապակ: 11. Պառաւ: 12. Պալատ:

37.—Հետեւեալ խօսքերը եզակիի փոխեցէք (Գ. Պրակ, էջ 63, հրահանգ 25):

1. Սպասուհիները վառեցին ճրագները: — 2. Դուք աւելցիք բակերը: — 3. Թոշունները երգեցին ծառերուն վրայ: — 4. Քահանաները թաղեցին մեռելները: — 5. Նաւաստիները առագաստներ պարզեցին: — 6. Վարժապետները ճառեր խօսեցան: — 7. Տէրտէրները Աւետարաններ կարդացին: — 8. Մատերս այրեցան բոցէն: — 9. Մենք ջուրերու պէս կարդացինք մեր դասը: — 10. Մինչև առտու ցուրտէն դողացիք ու հազացիք: —

11. Զաղացպանները ցորեն գնեցին, աղացին ու ծախեցին: — 12. Լոյսերը պլպլացին:

38.—Ի՞նչ հոլով են սա բառերը.

Դարու, ընկերութենէ, դադարման, նենգութեամբ, ժամուան, մահով, մականուան, կաթնեղբորմէ, մօրաքրոջ, սիրով, Աստուծոյ, կղզւոյ, իրիկունով, Պելճիոյ, Ռուսիոյ, պատուով, հեղութեամբ, քաղաքավարութեան, երէկուան, Սեւաստիոյ, տարուէնէ, խնձորնոյ, տանձենւոյն, Անանիայի, սիրոյ, հաւատոյ, եղբայրութեան, տիրոջմով, սանտօրմէ անուան, շարժումով, տատանման, հոլովման, հոլու, լուսոյ:

39.—Ալլեւայլ ի՞նչով ենք ապստկանող նոյն անանները գատ գատ գլեցիք՝ ամեն մէկը իր խումբին տակ:

13. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

40.—Կետերուն տեղ դրէք յսրմսր բառերը (տես Բանալի Շարագործեան էջ 65 եւ Դ. Պրակ էջ 61 Հրահ. 18):

1. Լակտար . . . ին ձագն է: — 2. Գաւազը . . . ին ձագն է: — 3. Աղաւեսեակը . . . ին ձագն է: — 4. Աղուեսուկը . . . ին ձագն է: — 5. Գայլակորիւնը . . . ին ձագն է: — 6. Օձակորիւնը . . . ին ձագն է: — 7. Կիտակորիւնը . . . ին ձագն է: — 8. Գառնուկը . . . ին ձագն է: — 9. Բադիկը . . . ին ձագն է: — 10. Քուսակը . . . ին ձագն է: — 11. Ուլը . . . ին ձագն է: — 12. Հորթը . . . ին ձագն է: — 13. Մարուկը . . . ին ձագն է: — 14. Մկնիկը . . . ին ձագն է: — 15. Թօժիւնը . . . ին ձագն է: — 16. Եզնորթը . . . ին ձագն է: — 17. Խոճկորը . . . ին ձագն է: — 18. Վառեկը . . . ին ձագն է: — 19. Կորիւնը . . . ին ձագն է: — 20. Կողոր . . . ին ձագն է: — 21. Աքլորը . . . ին

ձագն է: — 22. Թռչնակը . . . ին ձագն է: — 23. Մանուկը . . . փոքրն է:

41.— Ու կրաւորական բայերը ներգործականի փոխեցեք.

Ունուիլ, խարկուիլ, խառնուիլ, սիրուիլ, գրուիլ, բերուիլ, հանուիլ, թաղուիլ, շաղուիլ, մաղուիլ, շարուիլ, բացուիլ, կցուիլ, թրջուիլ, ածիլուիլ, ջրկուիլ, մանուիլ, բռնուիլ, հիւսուիլ, մարուիլ, պատնուիլ, մատնուիլ, աղաջուիլ, ընդունուիլ, փրկուիլ, պրկուիլ, ոռոգուիլ, զրուցուիլ:

42.— Գտեք սա բայերուն ներմակը.

Հեռանալ, ժողվել, մարիլ, պակսեցընել, կապել, շինել, կանխել, առաջնորդել, աղտոտել, խօսիլ, մեռնիլ, քակել, ելլել, բռնել, սիրել, պատժել, ամբիօրել, տըրամիլ, մեծնալ, ծածկել, գիրնալ, անիծել, կոտրել, ծախել, ուրախանալ, խնդալ, մոռնալ, յուզուիլ, թոյլատրել, հնազանդիլ, կորսնցընել, յոգնիլ, հիւանդանալ, ցաննալ, բանալ, վճարել, քնանալ:

14. ԴԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Ք Ո Ւ Ն Ը

1. Երբոր միտքն է խոնջ՝ հոգեբով տաղտուկ՝
Սիրոր ճընչըւած՝ ցաւերով գաղտուկ,
Արարածներուն համար, արդարեւ,
Քուեն է անուշիկ Աստուծոյ պարգեւ:

2. Խաղաղիկ է քուն՝ դարման ըսփոփիչ՝
Քունին մէջ հոգին կաղզուրուի մի քիչ՝
Կեանքին հետ դարձեալ՝ անդու ու յամառ
Հետեւեալ առտուն մրցելու համար:

3. Մարդս ունի պէտքեր՝ ետամու, տըգեղ՝
Բայց պէտքը քունին հաճոյք մ'է անմեղ.
Երբոր քնանայ մանուկ կաթընկեր
Մօր թեւերուն մէջ, ինչ սիրուն պատկեր:

4. Հաճոյք մ'է ձմրան եղանակին խիստ
Կակուղ անկողնի մէջ թաղուիլ հանգիստ,
Իսկ ամրան տօթին՝ ծառին հովասուն
Շուքին տակ նիրհել հեշտանք մ'է անհուն:

5. Հեշտանք մ'է, այժ, վարդագոյն բոյլ բոյլ
Երազներով ալ օրօրուիլ, ծոյլ ծոյլ,
Հեշտանք մ'է հանդարտ խղճով իրանալ,
Ու մոռնալ աշխարհն ու իր պատրանքն ալ:

43.— Վերի հատուածը կարդացեք, դժուար բառերուն բացատրութիւնը սորվեցեք, իմաստը հասկեցեք եւ սպազոց սորվեցեք:

44.— Նոյնը արձակի վերածեցեք՝ իմաստը ամբողջ պահելով, բայց ի հարկին բառեր ու նախադասութիւններ յեղաշրջելով:

15. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

45.— Սա խօսքերուն մէջ բայերը ներգործական եւ կրաւորականի փոխեցեք:

Օրինակ. — Որտոյրդ որս կը փնտռե = Որսը կը փընտուր որսորդէն:

Նաւաստին առադատ կը պարզէ: — Մեղուն մեղր կը շինէ: — Մայրը օրդին կը խնամէ: — Անտառներուն մէջ փայտահատը ծառ կը կտրէ: — Մենք փայտը կը վառենք ու կերակուր կ'եփենք: — Օճառը կը մաքրէ մար:

մինն աղտերը: — Հովը կը տապալէ մինչեւ իսկ հաստ կաղնիները: — Քոյրդ նամակ գրեց: — Շողենաւին ու նիւները ծովին ջուրը կը յուզեն: — Տղաքը կը քշին պարանները եւ ձողը վար կը ձգեն:

46.— Սա բառերուն սահմանը տաւր (Գ. Վարժ. էջ 22, Հրահանգ 18):

1. Զաղաղպան: 2. Զաղալք: 3. Ծխախոտ: 4. Մեշան կամ Թանաք: 5. Դատուոր: 6. Պերճախօս: 7. Կապիկ: 8. Սպունգ: 9. Քրիստոս: 10. Ս. Գրիգոր Լուսաւորիչ: 11. Ոսկերիչ: 12. Պիղատոս: 13. Պետրոս առաքեալ:

47.— Գտեք երեքական հատ

Վիլայէթի անուն, սանձագլի անուն, գաղայի անուն, նահիյէի անուն:

16. ԴԱՍ. — ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

14. Թուական ածականները չորս տեսակ են.

Ա. Բացարձակ բուական ածական, որ բանի մը քանի հատ ըլլալը կը ցուցնէ. մեկ տուն, երկու ծառայ, երեք հոգի, եւայլն:

Բ. Դասական բուական ածական, որ դաս կամ կարգ կը ցուցնէ. առաջին կարգ, երկրորդ տունը, երրորդ փողոցէն, եւայլն:

Գ. Դասականները կը շինուին բացարձակին վրայ ռորդ կամ երորդ աւելցնելով. Մէկ — առաջին (եւ ոչ միւրորդ), երկու — երկրորդ, երեք — երրորդ, չորս — չորրորդ, հինգ — հինգերորդ, վեց — վեցերորդ, եւայլն:

Դ. Բաշխական բուական ածական, որ բացարձակին վրայ ական մասնիկը դնելով կը շինուի այսպէս մէկ — մեկմեկ (եւ ոչ մէկական), երկու — երկերկու (եւ ոչ երկուական), երեք — երեքական, չորս — չորսական, եւլն:

Դ. Արժեք ցուցնող բուական ածական, որ բացարձակին վրայ նոց աւելցնելով կը շինուի. մէկ — մեկնոց, երկուք — երկուքնոց, երեք — երեքնոց, եւայլն:

15. Թուական ածականները կրնան հոլովուիլ — Մէկ, մէկի, մէկէ, մէկով, երկուք, երկուքի, եւայլն:

Առաջին, առաջինին, առաջինէն, առաջինով:

48.— Զանազանեցիք 4 տեսակ բուական ածականները.

Հինգնոց, երեքական, չորս, առաջին, վեցերորդ, տասներորդ, ութը, ինը, քսանը, վեցերորդ, հարիւրնոց, հազար, շուրջական, չորրորդ, քսաննոց, վեց, հազար:

49.— Թուական ածականներուն չորս տեսակները դիմ առ դիմ գրեցէք մէկէն մինչեւ քսան:

50.— Սա խօսքերը յարաբերական դերանունով գործածեցէք (տե՛ս Տարբ. Քերակ., էջ 24, Հրահանգ 51).

Օրինակ. — Կերած հացս. — Հացը գոր կերայ:

Վաճառած հաւերնիս: — Ներս մանող հիւրերը: — Կտորած գրիչներդ: — Ցորեն հնձող մանգաղը: — Հաց տուած աղքատներնիդ: — Ո՛վ է խօսողը: — Տղան ճանչցած մարդդ: — Դիրք մ'ընծայած ընկերս: — Ըրած հարցումնիդ: — Սալոր քաղած ծառերնիս: — Ծամբորդած նաւերնիս: — Կաթ կթած այծերնիս:

51.— Սա բառերուն սահմանը տաւր (Գ. Վարժութիւն Մանկանց, էջ 23, Հրահանգ 20):

1. Զի: 2. Էշ: 3. Կոյ: 4. Ոչխար: 5. Հօտ: 6. Հովիւ: 7. Շուն: 8. Գայլ: 9. Գրավաճառ: 10. Ժամացոյց: 11. Քարոզիչ: 12. Կաղմարար: 13. Կօշկակար:

14. Քանի՞ տեսակ են բուական ածականները: Ի՞նչ կը ցուցնէ Բացարձակ բուական ածականը: Իսկ Դասականը, Բաշխականը: Արժեք ցուցնող բուականը: — 15. Ի՞նչպէս կը հոլովուին բուական ածականները:

17. ԴԱՍ. — ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆ

16. Անորոշ ածականները գոյականին իմաստը կը մասնաւորեն առանց որոշ թիւ մը ցոյց տալու:

17. Անորոշ ածական են. ամեն, բոլոր, ուրիշ, ամենակ, մեկալ, մը, նոյն, քանի մը, ասանկ, ասանկ, անսանկ, այսչափ, այդչափ, այնչափ քանի, ինչպէս, ո՞ր, ո՞րչափ, ինչպէս, ինչ, ոչ մեկ, այսինչ, այնինչ, եւլն.:

18. Անորոշ ածականները գոյականէն առաջ կը դրուին (բացի մը էն) եւ չեն հոլովուիր:

19. Մը անորոշ ածականին ը գիրը կը ճատուելով՝ տեղը ապաթարց (') կը դրուի երբ յաջորդ բառը ձայնաւորով սկսի:

Քար մ'առի եւ ծովը նետեցի: Մարդ մ'ալ կար հոն:

52. — Սա խօսքերուն մէջ գտեք ածականները եւ որոշեցեք անոնց տեսակը:

Երկու մարդ տեսայ. — Քանի մը տարիէն մեծ տղայ մը պիտի ըլլամ. — Իմ սիրուն չնիկս մեռաւ: — Տասը փարա չունիմ որ դրիչ մը գնեմ: — Փայլուն կօշիկներս ձեր խանութէն առի: — Այս անուշ երգը առաջին անգամ է կը լսեմ: — Նա լեռան միւս կողմը չատ մը անմշակ արտեր կան: — Ես իմ գիրքիս վրայ թանձր կողք մը անցուցի: — Մեր նոր հազուամները պիտի հագնինք: — Մէկ մէկ խնծոր առէք: — Բարի հայր մը կը սիրէ իր զաւակը — Հինգնոց ոսկի մը ունէր զրպանը: — Ասանկ տղան ո՞վ չի սիրեր: — Երեքական դրիչ տուին մեզի: — Շտաթթը եօթն օր է:

53. — Բայերը խանարիցեք՝ ամբողջ նախադասութեան հետ:

Պատեր շինեց, ծախեց եւ դրամ շահիլ:
Գիրք մը փոխ առնեց, կարդաց եւ ետ տալ:

16. Ի՞նչ կ'ընեն անոնք ածականներ: — 17. Ո՞ր բառեր անոնք ածական են: — Անոնք ածականը գոյականէն առաջ կը դրուի եւ ետ: 19. Մը ինչ ը գիրը կը կրճատուի: Տեղը ի՞նչ կը դրուի:

18. ԴԱՍ. — ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

20. Ածականը վերլուծելու համար պէտք է ըսել թէ ի՞նչ տեսակ ածական է՝ որակական, ցուցական, ստացական, թուական թէ անորոշ, եւ ո՞ր գոյականին կը վերաբերի:

Օրինակ. — Ճերմակ վարդը իմ սիրական ծաղիկս է:
Ճերմակ հասարակ ածական՝ կ'որակէ վարդ գոյականը: Իմ՝ ստացական ածական՝ կ'որոշէ ծաղիկ անունը:

54. — Սա բառերուն սահմանը տուր (Գ.Վարժաթիւն Մանկանց, էջ 24, Հրահանգ 21):

1. Տուն: 2. Գոմ, փարսիս: 3. Բոյն: 4. Նաւ: 5. Նաւակ: 6. Մանգաղ: 7. Աթոռ: 8. Կրակարան: 9. Թուսբանութիւն: 10. Աշխարհագրութիւն: 11. Խելօք, հանդարտ: 12. Ուսումնասէր:

55. — Գտեք 3 հոտ՝

Վանքի անուն, եպիսկոպոսի անուն, մարդաբէի անուն, կաթողիկոսի անուն, սուրբի անուն, պատրիարքի անուն:

56. — Վերլուծեցեք սա խօսքերը:

1. Կարմիր վարդը անուշ հոտ ունի: 2. Երկու պղծտիկ թռչուն զարկի: 3. Քանի մը օր ալ սպասէ: 4. Իմ խօսքիս չե՞ս հաւտար: 5. Տասնոց մը անգամ չունիմ:

18. Ածականը վերլուծելու համար ի՞նչ հարցումներ դնելու է:

19. ԴԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԳԱՐՈՒՆԻՆ

Աղբիւրիկ

Ես կարկաչունն եմ աղբիւրիկ
 Եկեր եմ քեզ աչքալուսիկ,
 Բերեր եմ քեզ բիւրեղահիւս
 Ականակիտ՝ վճիտ փնջիկ:

Յօղիկ

Ես գոհարիկն եմ բոյսերու
 Մարգարիտն եմ հովիտներու,
 Ահա իմ փունջ ցօղէն քաղած
 Հազարաւոր կանաչներու:

Ծաղիկ

Ես ծաղիկն եմ մշտադալար,
 Անթառամն եմ ես բեղմնարար,
 Ամէն ծաղկի գոյնն ու հոտը
 Ահա բերեր եմ ձեզ համար . . .

57.—Աղբիւրը, Յօղիկն ու Ծաղիկը Գարունին կ'ուղղեն
 իրենց խօսքը՝ եւ ամեն մէկը իր նուիրը կը բերէ անոր:
 Ըսե՛ք, ի՞նչ կը նուիրու . . . :

58.—Իտեք նոյն հատուածին մէջ պարզ, քաղց եւ աւ-
 ծանցեալ բառերը(*):

(*) Պարզ եւ այն բառերը որ մէկ արմատ ունին:
 Բարդ , , , երկու արմատ ունին:
 Ածանցեալ , , , որոնց սկիզբը կամ վերջը գիր
 կամ մասնիկ կցուած է:

(Դասաւորու օրինակներ բոլոր օայ):

20. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Զ. ԱՄՍՈՒԱՆ

Բայից ժխտականը. — Բայը ժխտական ընելու համար
 կը գործածենք չ, մի՛ բառերը որ մակբայ կը կոչուին ,
 ինչու որ քային վրայ կը դրուին:

Սահմանական եղանակ ներկայ ու անկատար ժխտա-
 կան կ'ըլլան էական բային ժխտական ձեւով եւ բուն
 բային աներեւոյթով (չ գիրը ր ի փոխելով):

Հրամայականը մի՛ ով ժխտական կ'ըլլայ:

Միւս եղանակները ժխտն չ կցելով բային սկիզբը:

Հինգ տեսակ ճախդատութիւն. — Խօսք մը հինգ ձեւով
 կը զրուցուի. Սահմանական, Հրամայական, Ժխտական,
 Հարցական եւ Զարմացական:

Բայը վերլուծելու համար պէտք է որոշել անոր տե-
 սակը, Ժամանակը, Թիւը, Դէմքը:

Ածականներուն տեսակը հինգ է. Որակական, Ցուցական,
 Ստացական, Թուական, Անորոշ:

Ցուցական եւ ստացական յօդեր կը գործածուին ածա-
 կաններուն տեղը, զանոնք չկրկնելու համար. Եղակի
 մէջ միայն ս, դ, ն, իսկ յօքնակի մէջ նիս, նիդ, նին
 մասնիկները:

Թուական ածականները չորս տեսակ են, եւ գոյական-
 նին հետ գործածուելով՝ անիոյիս կը մնան, իսկ երբ
 մինակ (առանց գոյականի) ըլլան, այն ատեն կը հօլով-
 ուին:

Անբաշխ ածականները գոյականին քով գրուելով՝ անո-
 րոշ եւ ընդհանուր իմաստ մը կուտան անոր. Ասոնք գո-
 յակա՛նն առաջ կը գրուին (բացի մը էն):

Այդպէս կը գրուի կրճատուած գրի մը տեղ:

Այսպէս վերլուծելու համար պէտք է ըսել թէ ի՞նչ
 տեսակ է, եւ ո՞ր գոյականին իմաստը կ'ամրապնդուի:

ՊԱՀԵՐՈՒ ՐԱԺԱՆՈՒՄԸ

ժամ (*)	Չբարձր
3 45 3.30	Հաւաքում եւ աղօթք
3.30 — 4.30	Դաս
4.30 — 4.40	Դարար
4.40 — 5.40	Դաս
5.40 — 6	Դարար
6 — 7	Դաս
7 — 8	Ճաշ եւ զրօնակ
8 — 9	Դաս
9 — 9.40	Դարար
9.40 — 10.10	Դաս
10.10 — 11	Սերտողութիւն

(*) ժամերու այս բաժանումը ձեւա-
նում եղանակի հաշուով է: Ըստ այնմ
կատարել կանուստումն ալ, միշտ
նկատելով որ աշակերտները 5 ժամէն աւ-
ելի դաս չունեն եւ 7-8 ժամէն աւելի
չմնան դպրոցին մէջ (4 ժամ կես օրէն
ստաց, 3 ժամ կես օրէն վերջը):

<< Ազգային գրադարան



NL0240178

Պահ. (1)	Պ. Ե.	Պ. Ե.	Պ. Ե.	Պ. Ե.	Պ. Ե.	Պ. Ե.
Ա.	Բու. ար.	Հայերէն	Գիտ. ար.	Հայերէն	Պատմ.	Ճարար
Բ.	Հայերէն	Բու. ար.	Գիտ. ար.	Հայերէն	Պատմ.	Ճարար
Գ.	Բարոյագ.	Պատմ.	Գիտ. ար.	Հայերէն	Պատմ.	Ճարար
Դ.	Աշխարհա- գրութիւն	Գիտ. ար.	Հայերէն	Հայերէն	Պատմ.	Ճարար
Ե.	Գիտ. ար.	Գիտ. ար.	Հայերէն	Հայերէն	Պատմ.	Ճարար
Զ. (3)						

Ծ Ա Ն Օ Թ Ռ Ի Թ Ի Թ Ն Ե Ր

1. — Դպրոցական պահը կամ դասաժամը կը տեւէ՝ Տարրական Ա.
կարգին կամ 50 վայրկեան, իսկ Տարր. Ի. կարգին կամ ար. 1 ժամ:
2. — Մանկերու Մարմնավարդի պատճառով՝ աղջիկները Չեռարժ
կ'ունեն:

3. — Եղբակներ ու քոյրեր պահանջման համեմատ, կարելի է
հաստատել վեճերու պակսելը, երբ հարկ չըլլայ սերտողութիւնը
դպրոցին մէջ կատարել ալ:

Դասերու շարքն ու յաջորդութիւնն ալ կարելի է փոփոխել ըստ
պարագային:

Շեղագիր դրած դասերը նոր Դպրոցի նկարագրէն դուրս են:

ՆՈՐ ԴՊՐՈՑ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ

ՀԱՄԱԿԱԴՐՈՆ ԴՐՈՒԹԵԱՄԸ

10. — Դպրոցական տարին 10 ամիս ըլլալով՝ ՆՈՐ ԴՊՐՈՑն ալ տասը Պրակներու բաժնուած է: Մէն մի Պրակ կը պարունակէ մէկ ամսուան մէջ ուսանելի առարկաներէն ամէն այն ճիւղերը, որոնք պարտաւորիչ են Նախակրթութեան Դասընթացքին համար:

20. — Դասերու աւանդումը ճշգրտ ժԱՄԱՆԱԿԱՅՈՅՑը տպուած է Վեցերորդ Պրակին մէջ, իսկ շաբաթական ԴԱՍԱՅՈՒՅՄԱԿները որոշուած են Թ. Պրակին կցուած յաւելումական Թերթով մը:

30. — ՆՈՐ ԴՊՐՈՑի պարունակութեան և մեծութին վրայ մանրաւ մասն խօսուած է ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՄԱԴԻՐ անուն մասնաւոր Պրակին մէջ (որ փափաքողներուն ձրի կը դրուի), ինչպէս և Ա. Պրակին սկիզբը: Անոնց ընթերցումը կը յանձնարարենք ամէն Ուսուցչի:

40. — ՆՈՐ ԴՊՐՈՑը հիմնուած է Համակերպ Պրոթեան վրայ, հետեւողութեամբ Ուսուցչապետ Ա. Սէնէղի համանուն զործին: Եր մեծ հռչակ հանած է և կը զործածուի Եւրոպական առաջնակարգ դպրոցներու մէջ:

50. — ՆՈՐ ԴՊՐՈՑին շնորհիւ կարելի կ'ըլլայ հաստատել կանոնաւորութիւն և միօրինակութիւն՝ բոլոր Հայ դպրոցներու մէջ ուր ընդունուած է:

60. — ՆՈՐ ԴՊՐՈՑը ամէնէն լուսամիտ առաջնորդն է Հայ Ուսուցչի և անոր կը Թելադրէ ժամանակակից կրթութեան ոգին և մանկավարժութեան զործնական եղանակները:

70. — ՆՈՐ ԴՊՐՈՑը կարելի է ստանալ զատ զատ Պրակներով և կամ 10 պրակը միասին կազմուած:

80. — Ամբողջ 10 Պրակին զինն է Պոլսոյ համար 30 դրուշ, զաւառներու համար 35 դրուշ, արտասահմանի համար 3 ֆրանք (3 ռուպլի): Փոսթի ծախքը մեր վրայ է:

90. — Պրակները զատ զատ կը ծախուին Ծական դրուշի:

100. — Տարւ ձեռք մէկէն գնողը 1 Եոք նուէր կը ստանայ:

آستانه سرکه جیده خوراسانیان خاتمه سمپا افدی داودیان

Հաղէ. — ՍՄԻԱՏ ԼԵ. ԴԱՌԹԵԱՆ

Խորասանեան խան, Սիրիճի, Կ. Պոլիս